ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1885. ՅՈՒՆՎ. № 1 ՓԵՏՐ. Բ. ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես.

1. Բաղդատական կրթութիւն դպրոցում 1
2. Մանկական խաղեր. 8
3. Հենգ բռնում 12
4. Բաղդատական դաս. պարտաճանաչութիւն . 16
5. Կրօնի կրթական նշանակութիւն 20
6. Մանկավարժանոցների (ուսուցչական դպրոցների) առաւելութիւններ 24
7. Ալեքսանդրեայի հոգևոր դպրոցների մանկավարժական խորհրդի արձանագրութիւնից. 28
8. Նամակ խմբագրութեան 33
9. Պարսկաստանի Հայերի դպրոցական վիճակը. 42
10. Թիֆլիսի Ներսիսեան ազգային—հոգևոր դպրանոցի հակառողջապահական վիճակը. 47
11. Ս. Խաչ քաղաքի հոգևոր դպրոցի տեղեկագիր և ուսուցչի առաջարկութիւն. 52
12. Խմբագրութեան Ծանօթութիւն 58
13. Խմբագրական Ցիշատակարան. 60
14. Խմբագրութեան պատասխանները կազմի 2, 3 և 4 երեսներում. . . . . .
15. Մանուցմունք կազմի 4 երեսում.

ԱԽԱԼՑԽԱ
ՄԵՏՏԻՉ ՂԱԼԱՄՔԱՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ
1885

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ։

Եպիսկոպոսներն բարեկամին, Կարասուբազարի գրագարանի մասին հրատարակված էր Թիֆլիսի մի լրագրում։ Ուստի աւելորդ է Մանվելջանոցս գրելէ նոյնը կրկին հրատարակել։

Թիֆլիս, Ա. Ուս. Ստ. Տ. Ս. Այսուհետև Մանվելջանոցը ուղղակի կուղարկվի ձեզ Ա՝ՀԱՅԵԼԱՅԻ։ Շնորհակալութիւն ձեր գնահատութեան և բարեմաղթութիւնների համար առ Մանվելջանոցը։

Բազու, Ա. Վ. Մանվելջանոցի համար շատ թանկ է այդպիսի գնահատութիւնը։ Այո, Մանվելջանոցը պիտի ապրեցնէ մեր բարոյականութեան սերմերը սերմանելով, որ հայկական դպրոցներ 1) ստանան տեղեկութիւն ազգի ընթացքը և միտքը, ... թեն հոգին և ազնիւ զգացմունքները։ Գրագրութիւնը չվատնենայ, բաժանելներ, բաժանորդագրութիւնները ստացողութիւնն ևս մի ... ում։ Մինչդեռ նա ցանկանում ... դպրոցները բարձրանան ... արութեամբ բաժանորդագրվի դրման։ Իսկ այժմ ձեզ հեռ... պատրաստ նամակ և ծրար ... ին, վերջին տեսրի հետ, ... տի կունենանք եկող տարվան ... ղութեամբ։

Նոր-Բայազէտ, Ս. Փ., Ուրախ ենք, որ Մանվելջանոցը, և մանաւանդ մեր յօրինած ծրագիրները կարևոր էք դատում հայկական դպրոցների համար։ Ուր էր թէ առ մանկավարժական ընթերցանութիւն և պարապմունք սառնամանիք դարձած հայ ուսուցիչներն սկսին մտածել և կարդալ... Մանվելջանոցը ուղարկվեցաւ ձեզ նոյն հասցէով։

Վան, Տ. Փ. Ստացանք ,,Լուռ պարապմունքը,, և սպասումենք միւս յօդուածդ։

Ուման, . . . Որովհետև այս տեսրում արդէն տպվեցաւ նամակն հերքումն, ուստի ձեր ուղարկած

595

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Իւրաքանչիւր տետրը 2 թերթ։ Երկու ամիս 1 տետր։ Տարեկան գինը 3 մանեթ։

Հասցէն. Ахалцихъ. Редакція МАНКАВАРЖАНОЦЪ.

1885. ՅՈՒՆ. № 1 ՓԵՏՐ. Բ. ՏԱՐԻ

Faisons notre devoir, (Մենք մեր պարտքը կատարենք,
le reste est vanité. մնացածն ունայնութիւն է։)

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑՈՒՄ.

Հօրաս Մանը ամէրիկայի անուանի գործօնների մին է։

Այս օրերս գիտնական Գօֆրէ Փարիզում ատենաբանութիւն արեց Հօրաս Մանի գործունէութեան վերա, որպէս Միացեալ Նահանգների Մասաչուզէտ նահանգի ազգային լուսաւորութեան անուանի ղեկավարին։ Հօրաս Մանի ջանքերի վերջին նպատակը ուսման կամ լուսաւորութեան ծաւալումն չէր, այլ բարոյական առաջադիմութիւն էր։ Լուսաւորութիւնը, նորա աչքին, բարոյականութեան բաւարար ապահովութիւն չէր տալիս։ Լուսաւորութիւնը կարող էր նպաստել թէ չարին թէ բարուն, վնասել կամ ապահովել

հասարակական անդարրութիւնը։ Եթէ պէտք է ճշդութեամբ քննել ուսուցիչների դիտութիւնը, առաւել ևս պէտք է քննութեան ենթարկել նոցա ընաւորութիւնը և գաղափարները։ 1846 թ., Մասաչուզէտ նահանգում ազգային լուսաւորութեան նախարարի պաշտօնավարութեան վերջը, Հորաս Մանը ամէրիկական միտք ունեցաւ հետազօտելու այս խնդիրը թէ ինչ բարոյական ազդեցութիւն կարող է ունենալ լաւագոյն գաղափարների համաձայն կազմակերպված, խնամված և կառավարված դպրոցը, որի ուսուցիչները ընդունակ և արժանաւոր անձներ են, որտեղ միևնոյն մտքերով վառված են ծնողներ և քաղաքացիներ, և որի աշակերտները տարվան ընթացքում տասն ամիս երթևեկող չորսամեայ հասակից մինչև տասնվեցամեայ մանուկներ են։ Նա առաջարկեց այս խնդիրը ամենայայտնի, ամենաբանիբուն դաստիարակներին և նոցա պատասխանները հրատարակեց իւր մեծասաներորդ զեկուցման մէջ։ Այս պատասխանները միևնոյն ուղղութիւն ունէին։ Ամենահմուտ, ամենափորձառու մանկավարժները, որքան տարբեր և լինէին նոցա մասնաւոր կարծիքները, ամենքը միևնոյն միտք յայտնեցին թէ վերոյնշանակված պար-

մաններով, հարիւրից ոչ մի աշակերտ չէր խուսափի դպրոցի բարոյականացնող ազդեցութենից և վնասակար չէր դառնայ հասարակութեան համար։ Ուստի Հօրաս Մանը կարծում էր թէ գտաւ միջոց ամէրիկական բարքու վարքը վերանորոգելու, երկու կամ երեք սերունդը բաւական՝ պիտի լինէին վերանորոգութեան գործի և երջանկութեան նոր շրջան պատրաստելու համար։

Նա լոյս էր դնում կանանց գործակցութեան վերա դպրոցը վերանորոգելու համար։ Ահա նորա խօսքերը. «Կանանց սեռին յատուկ յաջողակութիւնները, նոցա առաւել շուտափոյթ համակրութիւնը, նոցա առաւել կենդանի զգացողութիւնը լուսափայլ նշան են, որ կանայք նշանակված են մանուկներին առաջնորդելու և պահպանելու սրտառուչ պաշտօնի համար։ Շատ բնական է, որ այն պատանին, որի միտքը սկսում է վարժվել հասարակաց կեանքի առաջին փորձութիւնների մէջ, յանձնվի և մտնէ ուսուցչի առաւել հաստատուն կառավարութեան ներքոյ, բայց նոյնչափ բնական է, որ փոքր մանուկը, որին ամեն բան խրտնեցնում է և որին վիրաւորում է ողջամարդի չափազանց խիստ ձեռն, իւր առաջին քայլերում, տնից դուրս, կնոջ փափուկ ձեռն

ընկնէր, որը լաւ կառաջնորդէր նորան դէպի նպատակը, և որի մայրական համբոյրը քաղցր բարեմաղթութիւն կլիներ նորա համար։

«Թող ուրեմն մեր ուսած երիտասարդ կանայքը ուրիշ դիտումն չունենան, առաւել բարձր նպատակին չդիմեն բացի վառելուց փոքր մանուկի սրտում; իբրև մի աստուածային բուրվառի մէջ, փափուկ և մաքուր զգացմունքը, իբրև երկրից երկինք հասնող լաւագոյն խունկը։ Խելացի և մեծ հոգիներ պատրաստելն առաւել արժանաւորութիւն է քան թէ նոյնպիսի անձն լինել. ով որ ստեղծումէ առաւել բարձր է քան թէ ինչոր նա ստեղծումէ։ Առաքինութեան գանձերն ինքնիրան տևումեն և բազմանումեն. նոցա զետեղել մանուկների սրտում, որ նոցա հետ աճեն և բազմանան, նշանակումէ ժամանակին յանձնել այնպիսի գանձեր, որոնց կարող է տարածել ժամանակը առատօրէն երկրի վերա, առանց երբէք աղքատանալու։»

Ահա ինչպէս էր հասկանում Հօրաս Մանը իսկապէս բարոյական կրթութիւնը դպրոցում։

«Ես շատ անգամ զարմացած էի մնում տեսնելով, որ ուսուցիչը մի ժամ անցուցանումէ թուաբանութեան դասին, միւս ժամ քերականութեան կամ պատմութեան դասին, և միւ-

նոյն ժամանակ, դասամիջոցին, մի բոպէում քանի մի խիստ պատիժներ է սահմանում։ Այն քան շատ աշխատութիւն և հոգացողութիւն է լինում մտաւոր զարգացման համար, և այնքան սակաւ—սրտի կրթութեան համար, մեր այն մասի համար, ուր գտնվումեն մեր գործողութիւնների բոլոր առիթներ, ուր գտնվումեն այն զգացմունքը, որոնք բարձրացնումեն մեզ մինչև երկինք կամ իջեցնումեն մեզ մինչև անդունդ։ Բայց, պատասխանումէ ուսուցիչը, ժամանակս չէ հասնում ամենտեսակ բարոյական դասերի համար։ Իմ ամենօրեայ պարտքերս բաւական բարդ են. մի՞թէ ժամանակ ունիմ հարցաքննելու այն կարծիքները, որ կարող է կազմել իւրաքանչիւր մանուկն իւր մասին արած կարգադրութեան արդարութեան մասին, կամ զղջումէ նա արդեօք թէ մի վատ գործ է մտածում, կամ կենդանի է արդեօք խիղճը թէ մեռած նորա կուրծքում։» Բայց, ի սէր Աստուծուն, բազմազբաղ դաստիարակ, ինչի համար է ուրեմն ժամանակը, եթէ ոչ այս բարոյական գործադրութեան համար։ Ի՞նչ առաւել լաւ կերպով կարելի է գործադրել ժամանակը, երբ մանուկը մոլորվումէ, եթէ ոչ գնելով նորա աչքի առաջ կողմնացոյցը, որ պիտի կանոնաւորէ նորա ընթացքը

նախ քան նա բոլորովին կխոտորվի։ Ժամանակի մատեաններին մէջ չկան աւելի նուիրական բոպէներ քան թէ այս արդիւնաւոր գործի համար գործադրված բոպէները։

«Երբ միտքս դարձնումեմ մանկութեանս ընկերներին, երբ յիշումեմ այն ծանօթներին, որոնց ունեցայ համալսարանում, ինն տարվան ընթացքում, երբ նայումեմ այն մարդիկների շրջաններին, որոնց հետ իմ պաշտօնավարական և հասարակական պարապմունքի առիթով յարաբերութիւններ ունէի, ես տեսնումեմ այնքան օրինակներից, որ անհասկացողութեան և տգիտութեան պատճառով կորած մի անձի հետ հարիւրաւորներ կործանված են բարեբարոյ կեանք կամ բարոյական սկզբունք չունենալու համար։ Եւ մեր կործանման պատճառների մէջ եղած այս անհաւասարութիւնը մեզ չէ արգելում նուիրել հարիւր անգամ աւելի ժամանակ և հոգսեր մտքի կրթութեանը քան թէ ազնիւ զգացմունքի և առաքինի վարմունքի կրթութեանը։ Տարէ ցտարի մենք կրկնումենք միևնոյն նաւագնացութիւն, և մեր ամենաթանկագին դանձերով լցված նաւը թռչումէ սրանումէ արհամարհելով իրան ամեն կողմերից սպառնացող կործանումն միևնոյն ժամանակ, երբ բոլորովին յայտնի է, որ եթէ

ովկիանոսը առանց սահմանի և յատակի չլիներ, մինչև մակերևոյթը լցված կլիներ նախընթաց նաւաբեկութիւնների բեկորներով։ Երդմնեցնում եմ ուսուցիչներին ուշի ուշով կրկին զննելու այս խնդիրը։»

Բացի ամերիկական ուսուցիչներից ամենուրիշ ուսուցիչներն ևս կարող էին օգտաւետարար հարցասիրել այս արժանայիշատակ խօսքերը։

Երկոտասանամեայ աշխատութիւններից և ճարտարախօս յորդորմունքից յետոյ (1837—1848) Հօրաս Մանը կարողացաւ կրկնապատկել տալ ազգային լուսաւորութեան ելևմտացոյցը իւր երկրում, հիմնել երեք մանկավարժանոցներ (ուսուցչական դպրոցներ), աւելացնել սկզբնական դպրոցներում ուսուցիչների, առաւելապէս ուսուցչուհիների թիւը, հաստատել ամեն տեղ ժողովրդական գրադարաններ, հրաւիրել կրթութեան բարերար խնջոյքի բանտարկվածներին, երիտասարդ կալանաւորներին և ապուշներին։ Իւր վերջին մի զեկուցման մէջ նա կարող էր ասել. «Մասաչուզէտը հայրախնամ վարչութիւն ունի. արեգակի պէս նա իջեցնում է լոյսը ամենքի վերա։ Ամենուրեք, որտեղ կայ խելք, նա ասում է. «թող լինի լոյս։»

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ։

Ut sit mens sana in corpore sano.

Եթէ մի կողմից կրթութեան նպատակն է մանուկից այնպիսի մի հաստատ բնաւորութիւն կազմել, որ յաղթելով բոլոր իւր կրքերին և անձնական հակումներին իւր բանականութեան պահանջներին կարողանար բաւականութիւն տալ, միւս կողմից էս առաւել անհրաժեշտ է նորա մարմինը այնպէս ամրացնել, որ նա կարողանար տանել ամենայն տեսակ աշխատանք, կարողանար բնութեան ամենայն տեսակ ազդեցութիւններին անվտանգ ենթարկվել։

Բայց դորան հասնելու առաջին պայմանը այն կլինէր, որ մեր ընտանիքն էս, իւր տեսակի մէջ կրթարան լինէր, որով ուսումնարանի հետ ձեռք ձեռքի տուած կարողանային այդ նպատակի իրագործմանը մօտենալ...։

Բայց քանի որ մեր կեանքը դեռ այնպէս չէ կազմակերպվել, որ հասկանային կրթութեան բուն նշանակութիւնը, քանի որ մեր ծնողների համար (նոյն իսկ գրեթէ բոլոր մեր ուսուցիչների համար։ Խմբ.) նշանակութիւն ունի ոչ թէ կրթութիւնը դաստիարակութեան մտքով, հապա ուսումն այսինքն գիտութեան մի որոշ քանակութիւն ունենալը, քանի որ նոցա համար դեռ ոչինչ գին չունի բարոյական և ֆիզիքական կրթութիւնը—նա զրօ է համարվում, այդ պաշտօնը մնում է մեր ուսումնարանների վերա, նա կախված է միայն մեր ուսուցիչ-

ների բարեխղճութեան ստուգանից. բայց այն էս կհարկէ մի մասով միայն։

Թողնելով բարոյական կրթութիւնը, մենք կամենումենք ֆիզիքական կրթութեան վերա դարձնել մեր ուսուցիչների ուշադրութիւնը։ Բայց այստեղ էս (ինչպէս որ պէտք էր եզրակացնել մեր վերոյիշեալ խօսքերից) մենք կրկին հանդիպումենք ընտանիքին. նորա մասնակցութիւնն անհրաժեշտ է, քանի որ ֆիզիքական կրթութեան մէջ մտնումեն բացի մարմնամարզութիւնից և խաղից, երեխայի քունը, հագուստը, դեղերի և գրգռեցուցիչ նիւթերի գործածութիւնը և բոլոր առողջապահական կանոնները։ Մանուկը միայն մի որոշ ժամանակ գտնվելով դպրոցում, այն էս փոքր մասը, հասկանալի է, որ այդ բաներից շատերը անկարելի է դպրոցական կանոններով անգամ գործադրել տալ։ Դպրոցի ձեռքում մնումեն միայն մարմնամարզութիւն ու խաղերը։

Բայց քանի՞ ուսումնարաններ ունինք, ուր մարմնամարզութիւնը, չասենք ստիպողական առարկայ, հապա նոյն իսկ իբրև խաղ ընդունված լինէր... մենք գոնէ և ոչ միւնը գիտենք։ Այս ըսպէս, մեր ամենամեծ ուսումնական հաստատութիւնը Գ. Ճեմարանն է, բայց դեռ նա էս չունի ոչ միայն բարդ գործիքներով կատարելի մարմնամարզութիւնը, այլև ամենապարզ, ընտանեկան շարժումները. հասկանալի է, որ մեր միւս դպրոցների մասին խօսք էս չի լինի։ (Այս տարին նոյեմբեր ամսից Ախալցխայի դպրոցներում սահմանվեցան մարմնամարզութեան դասերը։ Խմբ.) Մեզ մնումէ մի և ամենավերջին միջոցը—խաղերը...։

Բայց արի տես, որ մենք այնպիսի խաղեր չունենք, կամ շատ քիչ ունենք, որոնք յարմարէին մեր ուսումնարանների աշակերտներին. մենք, օրինակ ունենք դերի, ռուսի թօփ, կառէ և ուրիշ մի քանի խաղեր, բայց դոքա անյարմար են մեր ուսումնարանների, մեծ մասամբ 10—12 տարեկան տղաների համար։ Ճշմարիտ է այդ հասակին յարմար մի երկու խաղ ևս ունենք, բայց այնքան քիչ են, որ աշակերտների մէջ զզուանք է առաջացնում անդադար կրկնելը։

Խաղերը, որովհետև մեր ուսումնարաններում մարմնամարզութեան տեղ ևս պիտի բռնեն, այդ պատճառով անհրաժեշտ է, որքան հնար է, շատ խաղեր ունենալ, որով շարժմունքն ևս զանազանակերպ լինելով, տղաների տրամադրութիւնը կը պահպանէ։ (Պէտք է նկատել, որ մանկական խաղերը առհասարակ, ամենապարզ շարժմունքից կազմված լինելով, աւելի են զօրացնում այդ հանգամանքը...։)

Այս կողմից մեծ պարտականութիւն կայ մեր ուսուցիչների վերա երևան հանելու մանկական խաղեր, որպէս զի կարօղանային ուրիշ տեղի ուսուցիչներն ևս օգուտ քաղել դոցանից։ Ես այս անգամ վնկարագրեմ միայն, որը, խոստովանումեմ, թէև այնքան շարժմունք չէ պարունակում, բայց և այնպէս լաւ է ինչ քան թէ ոչինչ։ (Եթէ խմբագրութիւնդ տեղ կտայ, ես կուղարկեմ մի երկու ուրիշ խաղերի նկարագրութիւն ևս։) 1)

---

1) Մանկավարժանոցը ամենայն համակրութեամբ կհրատարակի խաղերի նկարագրութիւնը։ Խմբ.

Պէտք է նկատել, որ աշակերտների վերա մեծ ազդեցութիւն ունի ուսուցչի խաղն մասնակցելը այդ միջոցին մի առանձին կենդանութիւն և աշխոյժ է նկատվում առհասարակ նոցա մէջ. աշակերտներից իւրաքանչիւրն աշխատումէ իւր ճարպիկութեամբ գերազանցել միւսներին....

Ուսուցչի խաղն մասնակցելը, բացի բազմաթիւ ուրիշ օգուտներից, ունի և այն մեծ օգուտը, որ ուսուցիչը, շահվելով սորանից, կարող է ուսումնասիրել իւրաքանչիւր աշակերտի բնաւորութիւնն, հոգեկան կազմութիւնն ու առանձնայատկութիւնը, որ մանկավարժութեան առաջին կանոններից մին է (Հիշեցնենք, եթէ կոչտ օրինակով ասելու լինինք, ինչպէս որ Ճարտարապետը իւր շինութեան շարունակութիւնը կատարումէ հիմքին համեմատ...)։

Հասկանալի է, որ մանուկը խաղի ժամանակ այն չէ, ինչ որ դասի միջոցին նոյն ուսուցչի առաջ. նա այստեղ ազատ է և մինչև անգամ մոռանումէ ուսուցչի ներկայութիւնը, և նորա բոլոր շարժումները ստիպողական, սանձված չեն—հապա ազատ. նա այդ միջոցին արտայայտումէ բոլոր իւր հոգեկան շարժմունքը, իւր ընդունակութիւնները, և ուրախութիւն, և չարութիւն, և նախանձ, և սրախօսութիւն, և հնարագիտութիւն, և Ճարպիկութիւն, մի խօսքով շատ բան, և համարեա ամեն բան լաւ նկատող, ուսումնասիրելու նպատակով միացող ուսուցչի համար։ Բայց պէտք աշխատել մանուկների վերա չբռնանալ, ընդհակառակն միջոց պէտք է տալ նոցա արտայայտելու այն, ինչ որ են իսկապէս. խաղի միջոցին ուսուցչի անձնայորու-

թիւնը չպէտք երևի. եթէ հնար է, խաղի պարագլուխը աշակերտին չինել, իսկ ինքն երբև հասարակ խաղացող կմնանայ...։ Բայց այս խօսքերից չպէտք եզրակացնել, որ խաղը մանուկի քմահաճութեանը ծառայէ, ոչ, ընդհակառակն, ամենախիստ կարգապահութիւն պէտք դէպի խաղի կանոնները...։ Համաձայն ենք, որ այդ շատ դժուար է, մանաւանդ սկիզբներում. բայց բաւական է մի քանի անգամ շարունակ միանալ խաղին—արդէն փորձը ինքը ցոյց կտայ յաջողութեան միջոցները...։

Այսպէս ուրեմն. ա) խաղերը պիտի ծառայեն աշակերտներին երբև զուարճացնելու և ֆիզիքապէս ամրացնելու միջոց (ուրեմն և մարմնամարզութեան տեղ պիտի բռնեն) և բ) խաղին անհրաժեշտ է ուսուցչի մասնակցութիւնը, բայց այնպէս, որ նորա ներկայութիւնը ճնշող ազդեցութիւն չունենայ աշակերտների վերա, հապա ընդհակառակն միջոց տայ նոցա իրանց բոլոր ընդունակութիւնը ազատ երևան հանելու, բայց առանց խաղի կանոնների դէմ մեղանչելու...։

Մ. Պ.

ՀԻՆԳ ՐՈՊԷՈՒՄ.

Ոմանք ուսուցիչներ մի ժամ սակաւ են համարում աշակերտներին դաս հասկացնելու։ Առաջարկումեմ կարդալ և մտադրութեամբ խորհել այս փոքր յօդուածի մասին, և հաղորդել աշակերտներին, որոնք ընդհանրապէս ամենևին չգիտեն տնտեսաբար վարվել իրանց ժամանակի հետ։

Ամէրիկացիներն երբև գործնական մարդիկ սովորութիւն ունին ճշդութեամբ որոշելու հասարակական ժողովում խօսելու կոչված իւրաքանչիւր ատենաբանին յատկացրած ժամանակը։ Սա մի հիանալի եղանակ է ունկնդիրներին միջոց և վայելչութիւն տալու աւելի ճառախօսութիւնները լսելու։ Այլև այս նեղ սահմանը ստիպումէ ատենաբաններին ամփոփել իրանց մտքերը և ամեն անօգուտ խօսքից խորշել։ Ուրեմն սորանից կրկնակի օգուտ է քաղվում։

Նիւ-Իորկի քրիստոնէական միութիւնների մի տօնի օրը դօկտոր Պրիմը, որին նշանակել էին միայն սովորական ժամանակը այսինքն հինգ րոպէ, արտասանեց յետադայ շատ պատշաճաւոր, շատ գործնական ճառը, շատ բան ասելով քիչ ժամանակում։

«Իմ սիրելի բարեկամներ, ես հրաւիրված եմ ձեզ ճառելու առանց անդր քան կանոնադրած հինգ րոպէ ժամանակից անցնելու։ Հինգ րոպէում քիչ բան կարելի է ասել, շատ բան կարելի է անել։ Հինգ րոպէում կարող է կրակ կպչել մեծ քաղաքին, նաև տախտակամածը կարող է ծակվել և նաև կործանումն պատրաստվել, մի հոգի կարող է կորուստին մատնվել։ Մի րոպէում արած սխալը կարող է ամբողջ կեանքի վիշտ պատճառել։ Եթէ այս մտքը թափանցէր ձեր սրտերում, իմ յանձն առած գործը վերջացած կլինէր մի րոպէում, և ոչ հինգ րոպէում։ Քանի քանի երիտասարդներ, մոռացման կամ փորձութեան վայրկեանում, այնպիսի մի վատ գործ են կատարել, որ չեն յաջողացել ուղղել իրանց ամբողջ կեանքում։

Մի բոպէում գործած մի մեղքը, մի փոքր անուշադրութիւն առաջացնումեն անխուսափելի կորստական հետևանքներ։ Նսաւին մի բոպէ միայն պէտք եղաւ իւր անդրանկութիւնը ծախելու։ Մի անազնիւ գործ միայն, մի պերճ խօսք միայն, և հոգիդ արդէն արատաւորված է։ Ոչինչ ծով կարող չէ լուանալ այն բիծը։ Երբ փորձութիւնը կմօտենայ ձեզ, մի մոռանաք, որ հինգ բոպէում դուք կարող էք անարգել ձեր անունը, պատրաստել ձեզ խղճի սաստիկ խայթեր ամբողջ կեանքումդ, պատճառել ձեր ծնողներին ամենադառն վիշտ։

Կարելի է ահագին չարիք անել հինգ բոպէում, կարելի է նոյնպէս նշանաւոր բարիք անել։ Դուք կարող էք հինգ բոպէում հաստատ որոշել ճշմարտութեան և ազնուութեան ճանապարհ միայն գնալու, այս կախված է ձեզանից և դուք կարող էք տղամարդի վճիռ կապել հինգ բոպէում։ Սրա համար տարիներ պէտք չեն։ Իմացէք տնտեսել կոպէկներ և դուք մանէթներ կունենաք։ Ցարգեցէք բոպէների գինը և ամբողջ ժամեր կունենաք օգուտով գործադրելու։

Ես որ ձեզ հետ խօսումեմ ես խմբագրեցի փոքրիկ մի գիրք հետևեալ կերպով։ Սեղանատան ունիմ թուղթ, թանաք, գրիչ։ Երբ որ ստիպված եմ եղել սպասել քանի մի բոպէ մինչև որ ճաշն կբերեն, ես սովորութիւն արի գրելու քանի մի խօսք կամ քանի մի տող։ Ժամանակով գիրքս վերջացաւ, և հրատարակվեցաւ թէ չէ, ես խիստ լմացայ զանազան վկայողներից, որ նա լաւ ազդեցութիւն է արել։ Ամբողջ գիրք մի բոպէ ևս չէ խլած ինձա-

նից, որը ես կարող լինէի որիշ աշխատութեան համար գործածել։ Մեծ ցամաքը հողի փոքրիկ մասներից է շինված, ահագին ծովը ջրի կաթիլներից է բաղկացած։

Զօն Բրիդիֆոր ասաց. ես կորցրած եմ համարում այն ժամը, երբ խօսելով թէ գրելով անցուցած, որևիցէ բարիք արած չեմ։ Եւ Սէնէքը ասումէ մեզ թէ ժամանակը միակ գանձ է, որի վերաբերմամբ կարելի է ասել թէ ժլատութիւնը առաքինութիւն է։

Եթէ ես կարողացած լինէի գործադրել որևիցէ օգտաւէտ բան սովորելու այն ամենայն հինգ րոպէները, որ խլած են ինձանից ձանձրացուցիչ մարդիկ, կամ որ ես կորցրել եմ այն մարդիկների պատճառով, որոնք կանչված լինելով նշանակված ժամին, միշտ ուշացել են, այսօր ես ուրիշ մարդ կլինէի քան թէ ինչ որ եմ և շատ քան կիմանայի, ինչ որ չգիտեմ այժմ։

Մի վատնէք երբէք հինգ րոպէ ձեր ժամանակից։ Մի տաք կորցնել երբէք ուրիշին ձեր անձը-դութեամբ հինգ րոպէ ժամանակ։ Հինգ րոպէ ժամանակ աշխատութիւնն առաւօտեան, հինգ րոպէ աշխատութիւնն երեկոյեան և երկու կամ երեք տարվան մէջ դուք նոր եվրոպական մի լեզու սովորած կլինիք։

Մարդիկ գտնումեն, վերաղարձնումեն կորցրած փողը, դատաձանող քաղաքը, մինչև անգամ խանգարված առողջութիւնը, բայց կորցրած ժամանակը երբէք չեն գտնում, երբէք չեն վերադարձնում։ Բոպէները աւելի թանկագին են քան թէ ադամանդները։ Բոլոր մեր կեանքը բաղկացած է

յոպէններից։ Բոպէները մեզ բերումեն այս կեան-
քում իմաստութիւն և հարստութիւն, նոքա և-
պատրաստումեն երջանիկ յաւիտենականութիւն։

Վերջացնումեմ նախ քան մեր նախադասը կլի-
չեցնէ ինձ թէ ժամանակս լրացել է։ Կրկնումեմ
դարձեալ միանգամ. պատանի և երիտասարդ բա-
բեկամներ, մի արհամարհէք հինգ բոպէ։ Մի բոպէ
միայն բաւական է բարի գործ կատարելու համար,
և ով որ իւրաքանչիւր օր միայն մի բարի գործ է
կատարում, հիանալի և արժանաւոր կերպով է
գործադրում իւր կեանքը այստեղ և հարուստ հունձ
է պատրաստում իրան երկնքում։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ։

Պարտաճանաչութիւն։

Բաւական չէ ասել թէ պէտք ամեն բանում
հնազանդել պարտքին և թէ պարտքի և խղճի
համաձայն ներգործելն աղնիւ մարդի վսեմագոյն
կանոն է։ Պէտք իմանալ առաւելապէս թէ ինչ է
պատուիրում պարտքը։ Բարի կամքը իմաստութեան
սկիզբն է, և անկեղծ ու զօրաւոր բարի դիտա-
ւորութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի և մենք
շատ ներողամիտ պիտի լինինք դէպի նոքա,
որոնց բարի կամքը անկասկածելի է, թէպէտ և
սխալվէին նոքա և մեզ չարիք հասցնէին։ Սակայն
բաւական չէ միայն պարտքը կատարելու բարի
կամք ունենալ, հարկաւոր է ճանաչել պարտքը։
Բարոյախօսութեան առարկան յատկապէս մեր

պարտքը մեզ Ճշդութեամբ Ճանաչեցնելու ուսումն է, ապա ոչ թէ վայրենիներն և կարծումեն թէ Ճանաչումեն իրանց պարտքերը։

1) Նախ պարտքը, մեր անձնական վայելչութենից և մեր մասնաւոր շահաւէտութենից տարբեր լինելով, բոլորովին ընդհանուր է այսինքն միևնոյն է միևնոյն պայմաններին մէջ գտնվող բոլոր մարդիկներին համար։ Ինչ որ լաւ է մինի համար վատ չէ միւսի համար, ինչ որ բանականութիւնը արդելումէ Հեղինէին, նոյնը չէ թոյլատրում Սօղոմէին։ Ինչպէս որ Ճշմարտութիւնը (օրինակ թուաբանական մի Ճշմարտութիւն) Ճմարիտ է մինչտ, և Ճշմարիտ է ամեն տեղ, և պէտքէ այդ խոստովանել անմիտ չերևելու համար, նոյնպէս և արդարութիւնը բոլորովին միևնոյն բան է պատուիրում ամենտեղ և ամենքին։

Ուրեմն անսխալ կերպով Ճանաչելու համար մեր արածը կամ մեր առնելին լաւ է թէ վատ, պէտքէ մարդը իւր խղՃին հարց անէ թէ կատարելի գործը մեզ լաւ և խելացի կերևէր արդեօք, եթէ մեր տեղ մի ուրիշն կատարէր։ Եթէ այո, կարող ենք կատարել համարձակորէն, եթէ ոչ, պէտքէ մեզ այն արդելենք։ Զասենք թէ ոչ ոք չի իմանայ։ Հնները ասումէին. իմաստունը պիտի կարողանայ բնակել ապահեայ տան մէջ։ Հին երևելի հեղինակներից մին ասումէ. Ամեն բանում և ամեն տեղ բաւական աչքեր ունիմ ինձ վայելչապէս պահելու համար, չկան ուրիշ աչքեր ամենևին, որ ինձ հսկէին այնքան մօտ և ես աւելի յարգէի քան թէ իմ աչքերը։ Հաստատապէս համոզված լինենք, որ այն գործո-

զութիւնը լաւ չէ, որը կամենումենք որ անյայտ մնայ և որին չենք կամենում որ ամենքը նմանեն։

2) Երբեմն գործը անմեղ է լինում կամ ինքն ըստ ինքեան լաւ է լինում, բայց առիթը լաւ չէ։ Ճիշդ իմանալու համար առիթի լաւ կամ վատ լինելը, միևնոյն կանոն գործադրենք։ Ամենայն պարզութեամբ, առանց մեզ խաբել կամենալու, հարցնենք մեզ. ինչն է Ճշմարիտ առիթը, մեզ առաջնորդող գաղտնի առիթը։ Եթէ առիթը այնպիսի չէ, որ կարելի լինէր բարձրաձայն յայտնել ամենքին, ուրեմն լաւ չէ։ Եթէ լաւ է, արժանի պիտի համարվի ընդհանուր կանոն դառնալու ամենայն բանական էակի համար, պիտանի դոլով միևնոյն հանգամանքներում։ Ներգործենք միշտ այնպէս, որ մեր գործողութեան ծածկված պատճառը կարողանար վարվելու կանոն դառնալ ամենքի համար։ Միևնոյն ժամանակ երբէք մոռանալու չենք, որ սրտագէտ Աստուած Ճանաչումէ ամենքի սրտերի խորքերը և այնտեղ սկիզբն առնող գործողութիւնների ամենայն առիթները։

3) Արդ լաւ խորհելով կարելի է միայն մի կանոն գտնել, որին ամենքը կարող լինին միշտ հետևել առանց օք մին մոլորեցնելու։ Այս կանոնը ոչ Եպիկուրի աշակերտների նշանաբանն է, որ ասումէին թէ որոնիր քո վայելչութիւնը, աշխատիր ամենաբաղդաւոր լինել։ (Եպիկուրը յոյն փիլիսոփայ էր Ցիսուսից 300 տարի առաջ)։ Որովհետև եթէ ամենքը միայն իրանց վայելչութիւն որոնէին, այլևս բարոյականութիւն չէր լինի։ Եւ ամենայն միջոցներով ամենաբաղդաւոր դառնալ աշխատողը

ինքնասէր, եսասէր մարդ կլինի, որը շատ անգամ ուրիշներին շատ վնասներ է հասցնում, առանց իւր որոնած բաղդաւորութեանը հասնելու։

Ոչ հետևեալ նշանաբանն է, որ աւելի ազնիւ է թէ ինքատի ունեցիր միշտ ընդհանուր օգուտը։ Որովհետև երբեմն դժուար է, առաւել գիտնականների համար անգամ, ճիշդն իմանալ թէ որն է ընդհանուր օգուտը, մինչդեռ պարտքը, տգէտների համար ևս լինելով, ամենից առաջ պարզ պիտի լինի։ Այլև օգուտները փոխվումեն, պարտքը միշտ նոյն է։ Վերջապէս օգուտները միշտ համաձայն չեն, և ընդհանուր օգուտը շատ անգամ պահանջումէ, որ մասնաւոր օգուտը զոհվի։ Այն ևս լաւ իմանալու է թէ ինչ դէպքերում և ինչ պատճառներով հարկաւոր է մասնաւոր օգուտը զոհաբերել. ուրեմն հարկաւոր է ուրիշ կանոն գտնել, նոյն իսկ օգտից դուրս և բարձր։

Այս կանոնը, որ վայելչութիւնից վեր է, բայց ամենամեծ ուրախութիւն է բերում կատարողին, այս կանոնը, որ մասնաւոր և ընդհանուր օգտից վեր է, բայց ամենքից կատարվելով, ամեն շահերին բաւականութիւն կտար, պարտքի այս ճշմարիտ կանոնը, որ նոյն է ամենքի համար և ամեն տեղ, որին կարելի է միշտ հաւատալ, որը միշտ պարզ է, որը թոյլ է տալիս, երբ հնազանդումեն նորան բոլորովին, լաղագրութեամբ սպասելու երջանիկութիւններին, ահա սա է։

Ցարգիր միշտ քո մէջ և ուրիշների մէջ մարդկային անձնաւորութեան արժանիքը։ Վարվիր ամեն անձի հետ իբրև նուիրական անձի։ Երբէք

մի դարձնեը ուրիշներին քո վայելչութեան և քո օգտաւէտութեան հասարակ գործիքներ։ Մի խօսքով այս կանոնը Աւետարանի այս խօսքի մէջ է ամփոփվում. զոր ինչ կամիցիս զի արասցեն ձեզ մարդիկ, զնոյն և դուք արարէք։ Մեծ է զանազանութիւն անձնների և իրերի մէջ։ Իրերը միմեանց չեն պատկանում, նոքա պատկանումեն մարդին, որը գիտէ նոցա իւր կարիքներին և պիտոյքներին ծառայեցնել։ Բայց մի ազատ և բանական անձն միայն իրան է պատկանում. նա չէ կարող ուրիշին պատկանել և ոչ ուրիշի գործեր կատարել, եթէ ինքն համաձայն չէ։ Պետրոսի ազատութիւնը նոյն է ինչ որ Պօղոսի, նոքա միակերպ բանականութիւն ունին իրանց կեանքը և գործերը վարելու։ Նոցանից իւրաքանչիւրն ունի իւր պարտքեր և իւր պատասխանատուութիւն. նոքա հաւասար են բարոյականութեան առաջ։

ԿՐՕՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ։

Կրօն ունենալ նշանակումէ կենդանի և խորին հաւատ ունենալ առ Աստուծը, փառաբանել Նորան և սրտանց պատրաստ լինել կատարելու, ինչ որ պատուիրումէ կրօնը։

Կրօնական զգացման զարգացումն աշակերտի մէջ դաստիարակութեան գլխաւոր խնդիրներից մին պիտի լինի։

Կրօնը մարդկային հոգու կարիք է։ Չկայ մի ազգ, որը ինչևիցէ կրօն չունենար։ Որքան տգէտ, վայ-

բենի լինի մարդս, այնու ամենայնիւ նա օրէցէ կրօնական զգացմունքներ ունի։ Բնութեան վսեմ, գաշտուրելի, հաճելի կամ անհաճոյ երևոյթներից տպաւորութիւններ ստանալով, նախնական մարդը ակամայ որոնումէ նոյն երևոյթների սկզբնապատճառը և ստեղծումէ իւր կրօնը։

Եթէ ուշք չենք դարձնում կրօնական զգացման կրթութեանը, կրօնի կարիքը իհարկէ կայտնվի այլանդակված, աննպատակայարմար ձևով։

Կրօնական կրթութիւնը կապված է բարոյական կրթութեան հետ։ Կրօնի պահանջմունքով, Աստուածային պատուիրաններով բարոյականի պահանջմունքը իրանց ծայրագոյն հաստատութիւն են ստանում։ Ոչ մի տեղ կրօնը չէ հակառակում բարոյական պահանջմունքին։

Ճշմարիտ կրօնական կրթութիւնը գեղեցիկ տրամադրութիւն է տալիս մարդի հոգուն։ Կրօնը կապումէ մարդին հոգևոր աշխարհի հետ։ Կրօնական կրթութիւնը, որ սովորեցնումէ հոգով սրտով վերանալ դէպի հոգևոր աշխարհը, շատ ազնուացնումէ մարդին։

Կրօնը զօրացնումէ, ոգևորումէ մարդին՝ ապագայի յոյսով և պահպանումէ նորան դժուար րոպէներում։ Նա արմատացնումէ մարդի մէջ գեղեցիկ զգացմունք, պատուիրելով սիրել ամենքին իբրև եղբայրներին։

Կրօնական կրթութիւնը պէտք սկսվի մանկութենից։ Սխալ է այն կարծիքը թէ մանուկը կրօն չէ կարող հասկանալ. կրօնական ճշմարտութիւնները խելքի քննութեան պէտք չունին։ Նոցա համար պէտք են հաստատ և զգացումն, իսկ այս ընդունա-

կութիւնները յատուկ են առաւելապէս մանկական հասակին։

Կրօնական կրթութեան գլխաւոր միջոցը մանուկին շրջապատող անձնների օրինակի անմիջական ազդեցութիւնն է։ Ծնողների կամ ընտանիքի մի անդամների ջերմ աղօթքը կամ ուրիշ բարեպաշտ գործողութիւնները մեծ ազդեցութիւն ունին մանուկի վերա։ Օրինակ, երբ մայրը չոքած աղօթումէ, մանուկը, գրեթէ անգիտակցաբար հետևելով մօր օրինակին, ինքն ևս չոքումէ և սկսումէ աղօթել։

Հասարակական աղօթքը եկեղեցում նոյնպէս մեծ նշանակութիւն ունի մանուկների համար։ Թէ տաճարում ներկայ գտնվողների աղօթքը և թէ ժամասացութիւնը ազդումեն մանուկի կրօնական զգացման վերա։

Կրօնական սովորութիւնները նոյնպէս նշանակութիւն ունին. օրինակ եթէ տասն տարեկան մանուկը սովորած է աղօթել քնելուց առաջ, նա դժուար թէ անկողին մտնէ առանց աղօթքի, իսկ եթէ մոռանար, նա կամ կվերկենայ աղօթելու կամ անկողնում կաղօթէ։

Կրօնական կրթութեան համար պէտք է օգուտ քաղել նոյնպէս ամեն դէպքից, երբ կարելի է մանուկի կրօնական զգացումն զարթեցնել։ Օրինակ, աշակերտը տեսնումէ բնութեան վսեմագոյն մի տեսարան կամ հրաշալի մի երևոյթ։ Եթէ այդ միջոցին դաստիարակը հասկացնէը նորան Աստուծու—ամենայն տեսանելի երերի և երևոյթների Արարչի—մեծութեան գաղափարը, կարելի է հաստատացած լինել, որ սա խորին տպաւորութիւն կթողնէ աշակերտի հոգու վերա։

Բայց այս բոլոր միջոցներից, կրօնական զգացումն զարթեցնելու և զօրացնելու գլխաւոր միջոցը կրօնի դաստիարակութիւնն է իհարկէ։

Կրօնի դաստիարակութեան նպատակ պիտի լինի ոչ միայն աշակերտին կրօնական տեղեկութիւնները հաղորդելը, այլ գլխաւորապէս նորա զգացման վերա ներգործելը։ Ոչ միայն կրօնի դասերի բովանդակութիւնը, այլ նոցա աւանդելու ձևն ևս պիտի զարթեցնէ աշակերտի կրօնական զգացումն։ Նոյն ինքն կրօնուսոյցը իհարկէ ոչ միայն պիտի իմանայ ինչ որ ուսուցանումէ, այլ խորին կերպով թափանցված պիտի լինի կրօնական զգացմունքով, որ իւր դաստիարակութեամբ կարողանայ ազդել աշակերտի սրտի և կամքի վերա։

Ճշմարիտ կրօնական տրամադրութեան մէջ անհնարին է անտարբեր սառն յարաբերութիւն դէպի կրօնը։ Կրօնական անտարբերութիւնը ցոյց է տալիս, որ կրօնական զգացումն չկայ անտարբեր հոգու մէջ։ Երբէք ցանկալի չէ իհարկէ այսպիսի գրութիւնը։ Բայց միւս կողմից ցանկալի չէ կարող լինել և մոլեռանդութիւնը, որ արհամարհումէ և ատումէ ուրիշ կրօն դաւանող անձներին։

Քրիստի վարդապետութիւնը պատուիրումէ սէր առ ամենայն մարդիկ, ուստի արհամարհանք կամ ատելութիւն դէպի ուրիշ կրօն դաւանող անձներն անհամաձայն է այս վարդապետութեան հետ։ Կարելի է խիստ կրօնասէր լինել, և միևնոյն ժամանակ քրիստոնէական սէր ունենալ առ ամենայն այլադաւան մարդիկ...

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑՆԵՐԻ (ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ) ԱՌԱՎԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ուսուցչական պաշտօնին պատրաստվող երիտասարդների համար մանկավարժանոցը մեծ օգուտներ և առաւելութիւններ ունի։ Չեմ ասում թէ յաջողակ և հմուտ ուսուցիչ լինել անհնարին է առանց մանկավարժանոցում ուսում ստանալու։ Յաջող ընդունակութիւններ ունեցող, աշխատասէր և խելացի խորհուրդներ լսող երիտասարդը կարող է հասնել ուսուցչութեան և յաջողակութեամբ վարել ուսուցչական պաշտօնը առանց մանկավարժանոցում ուսումն առնելու ևս, բայց նա կհանդիպի աւելի շատ արգելքներին և խոչընդոտներին։

Մանկավարժանոցներում ուսումն անհամեմատ աւելի հաստատուն է, աշխատութիւնը այնտեղ աւելի բանիմաց է և աւելի կարգաւորված։ Բայց նոցա առաւել մեծ արժանաւորութիւնն այն է, որ ուսուցչին անհրաժեշտ կարևոր համարված յատկութիւններն անդադար մշակումեն և զարգացնումեն այնտեղ աշակերտի մէջ, բազմաթիւ հնարագէտ միջոցներով, որը գործ են դնում մանկավարժանոցների վերատեսուչները։ Աշխատելով միանգամայն ձեռք բերել տեղեկութիւններ, աշակերտը սովորումէ նոյնպէս նոցա աւանդելու արհեստը, և առաւել թանկագին այն է, որ հմուտ դառնալով իւր կոչման մէջ, միևնոյն ժամանակ նոյն կոչումն կրելու ար-

ժանաւորութիւն է ստանում։ Մեծ բարեբաղդութիւն է պատանիների համար մանկավարժանոցում ուսումն առնելը։

Հոգին ստանում է մի հիանալի հլուսականութիւն, մի զարմանալի եռանդ, այն տանը, որտեղ ամենայն կամքը ենթարկված են խիստ կարգապահութեան օրէնքին։ Չէք կարող երևակայել թէ ինչ է մանկավարժանոցի կարգապահութիւնը։ Ամենաբարեկարգված դպրոցներն երբէք նորա նման բան չեն կարող ունենալ։ Դուք չէք կարող նորա նմանը գտնել մինչև անգամ բարեկարգ զինուորական կառավարութեան մէջ. որովհետև զինուորական կարգապահութիւնը ելնում է միայն զինուորի արտաքին գործողութիւնների վերա և նորա կամքին ազատութիւն է տալիս ամեն բանում, ինչ որ ծառայութեանը չէ վերաբերվում։ Բայց մանկավարժանոցում աշակերտի նոյն ինքն միտքը ենթարկված է կարգապահութեան և խիստ ողջմտութեան ազդեցութեանը։ Եւ հոգու բոլոր շարժմունքը, նոյն և բոլոր արտաքին գործողութիւնները միօրինակ ենթարկված են կանոնին։

Մանկավարժանոցում ամենայն ինչ կշռված է խելացի նախատեսութեամբ աշակերտի վերա միբկարար ազդեցութիւն ունենալու համար։ Այս ազդեցութիւնը, որ զարգացնում է անգիտակցաբար նորա մէջ բարոյական սովորութիւնները, գտնվում է ամեն բանում, ինչ որ նորա աչքին է ընկնում, ինչ որ նա լսում է, և մինչև անգամ այն օդում ևս, որը նա շնչում է։ Ամեն բան ձայն է տալիս աշակերտին դէպի բարին ոգևորելու համար։ Նորա

ուսուցիչները, նորա աշակերտակիցները, նորա պարապմունքը, նորա ազատ ժամերը նպաստումեն այս սուրբ գործին։ Իւրաքանչիւր ամիս, իւրաքանչիւր օր և կարելի է ասել իւրաքանչիւր ժամ մի քայլափոխ է նշանակում դէպի առաջ նորա ասպարէզում։

Մանկավարժանոցում աշակերտը ոչ միայն սովորումէ առաքինութիւններ, հապա նա առանձին կերպով վարժվումէ այն բարեմասնութիւնների մէջ, որոնց պահանջումէ ուսուցչական կոչումն։ Մանկավարժանոցներում երբէք չեն մոռանում, որ այնտեղ ոչ միայն բարեգործ մարդիկ պիտի պատրաստվին, հապա և օգտաւէտ ուսուցիչներ։ Իւրաքանչիւր ուսուցչացու աշակերտը իւր անձնական փորձով կարող է այս մասին համոզվել։ Մանկավարժանոցում չեն թողնի, որ աշակերտի միտքը թափառէ մանկավարժական տեսութիւնների մէջ, և ոչ մոլորվի անորոշ վարժութիւնների մէջ, բայց կչանան հեշտացնել, կանխագոյն սովորութեան միջոցով, ուսուցչական պաշտօնի պահանջած յատկութիւնների կրթութիւնը։ Աշակերտին կպատրաստեն համբերութեամբ տանելու այն փորձութիւնները, որոնց նա պիտի ապագայում ենթարկվի։ Աշակերտին կտան զէնք նորա առաջ բացվող պատերազմների համար, նորան միջոցները կտան այս պատերազմները շատ զարհուրելի չհամարելու, որովհետև մանկավարժանոցի աշակերտների մէջ կոչնչացնեն պատերազմները յարուցանող կիրքերը և սորա հետ և թշուառութիւն առաջացնող թուլութիւնները։

Խնամքով ընտրված ուսուցիչները, որոնց ուսումն

ընդհանրապէս շատ առաւել է քանի՞թ ինչ որ պիտի աւանդեն աշակերտներին, անդադար պիտի հսկեն աշակերտների վերա։ Նոցա շնորհով աշակերտների կեանքում ոչինչ է յանձնվում հանգամանքի բերմունքին. նոքա հիմնաւորապէս ուսումնասիրումեն աշակերտների ոգին և բնաւորութիւնը, և իւրաքանչիւրին տալիս են իրան պատշաճաւոր ուղղութիւն և զարգացումն։

Վերջապէս (և սա պակաս առաւելութիւն չէ) մանկավարժանոցում աշակերտները շրջապատված են պատանի նախանձաւորներով, որոնք միևնոյն նպատակին դիմելով, կմրցեն ջանքերի մէջ նպատակին հասնելու։ Նոքա կոգևորվին միմեանց ջերմեռանդութեան նայելով։ Այս ազնիւ պատերազմի մէջ քաջութիւնը զօրանումէ թէ յաղթութեամբ և թէ պարտութեամբ։ Իւրաքանչիւրը տալիս է և առնումէ օրինակը։ Եւ ամենքի բաշի տրամադրութիւններից կազմվումէ ընդհանուր մի ոգի, որը յեստոյ ներգործումէ իւրաքանչիւրի վերա անդադար անօր ոյժով։

Ո՞րքան քաղցր է տեսնել, որ մանքուր և վեհանձն պատանեակները միաբանած են սրբութեամբ օգտաւէտ և բարի գործի համար և մրցումեն միմեանց դէմ աշխատութեան և իմաստութեան յաղթանակի համար։ Այս սորանից աւելի հանոյակատ տեսարան չկայ առաքինի մարդի աչքին։

ԱԽԱԼՑԽԱՑԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵՆԻՑ։

Տեսուչն ասաց ուսուցիչներին, որ դասերին ներկայ լինելով և շատ անգամ ամենահասարակ հարցերին աշակերտների տուած անյաջող պատասխաններ լսելով, նա կարծումէ, որ այն անյաջող պատասխանները ոմանց ուսուցիչների անյաջող հարցերից են առաջանում։ Ուստի առաջարկեց ինկատ առնել թէ ինչ կերպով տալու է հարցեր։

Աշակերտների դատողութիւնը մտքեր է արտայայտում ուսուցչի հարցերով։ Հարցերի որակութենից կախումն ունի ուսուցման յաջողութիւնը։ Ուստի թէև ըստինքեան աննշան խնդիր է երևում, բայց հարցեր առաջարկելու խնդիրն ուսումնասիրութեան արժանի նիւթ է ուսուցչի համար և իւր հարցերին ուսուցիչը առանձին ուշք պիտի դարձնէ։ Ուսուցչի հարցերից գլխաւորագոյն պահանջմունք սոքա են։

1) Իւրաքանչիւր հարցը պիտի լինի նպատակայարմար այսինքն աշակերտների դատողութիւնը մտքեր արտայայտելուն պիտի ուղղէ, պիտի հեշտացնէ, պարզէ և ոչ թէ ճնշէ նոցա դատողութիւնը։ Անյաջող հարցերով կարելի է այն աստիճան ճնշել աշակերտների

դատողութիւնը, որ նոքա, չտեսնելով իրանց մտքի գործունէութեան մի ելք, հրաժարվումեն նոյն առարկայի վերա մտածելուց։

2) Հարցեր տալու է յաջորդաբար և յարմարութեամբ։ Իւրաքանչիւր հետևեալ հարցը պիտի պատրաստված լինի նախընթաց հարցով (մարմին անուն է, գոյական, այս գոյականից կարելի է արդեօք ածական շինել և այլն), և բնականաբար պիտի կապվի նախընթաց հարցին տուած աշակերտի պատասխանի հետ։ Եթէ առաջարկված հարցին աշակերտը ցանկալի պատասխան չտուեց կամ անյաջող պատասխան տուեց, ուսուցիչը նպաստող հարցերով պիտի հասցնէ աշակերտին հարկաւոր պատասխանին, առանց ինքն պատրաստ պատասխան ասելու, և ապա առաջ վարէ, շարունակէ իւր գործը։ Նպաստող հարցերն ասելով հասկանալու է այնպիսի հարցերը, որոնք օգնումեն աշակերտին ինքնուրոյնաբար պատասխանելու առաջարկված հարցին, ցոյց են տալիս խնդիրը լուծելու մտքի ուղղութիւնը։

3) Հարցերը բովանդակութիւն պիտի ունենան այսինքն պիտի մղեն աշակերտներին առ մտաւոր գործունէութիւնն։ Իւրաքանչիւր հարցը աշակերտներին մատչելի մի խնդիր է, որ նոքա պիտի լուծեն սեփական ջանքով առաջ

գնալու և տեղեկութիւններ ձեռք բերելու համար։ Այն հարցերը, որոնց աշակերտները պատասխանումեն առանց իրանց դատողութեան պատշաճաւոր գործունէութեան, իհարկէ անբովանդակող, դատարկ հարցեր են։ Օրինակ յուշ առնող հարցերով ուսուցիչը արդէն պատասխան է յայտնում, այնպէս որ աշակերտին մնումէ միայն համաձայնել հարցով յայտնած մտքի հետ։ Այդպիսի աննպատակ հարցեր կհամարվին այն հարցերն ևս, որոնց աշակերտը պատասխանումէ միայն այո կամ ոչ բառով։

4) Աւելորդ հարցեր այսինքն այնպիսի հարցերը, որոնք աշակերտների դատողութիւնը նպատակին չեն ուղղում, առաւել ևս այնպիսի հարցերը, որոնք նպատակից դուրս են մղում դատողութիւնը, պէտք չէ առաջարկել։ Որքան ուսուցիչն աւելի ուղղակի և պարզ է տանում աշակերտին դէպի նպատակը, այնքան աւելի լաւ է։

5) Հարցերը պիտի լինին աշակերտների համար պարզ և հասկանալի։ Այն ամենն, ինչ որ հարցերն անհասկանալի է դարձնում, օրինակ օտար անհասկանալի բառերը, այնպիսի գիտնական բառերը, որոնք անյայտ են աշակերտներին, վերացական մտքեր նշանակող խրթին բառեր, անշարմար են ուսուցման մէջ։ Անյայտ-

մար են նոյնպէս շատ երկար հարցեր այսինքն քանի մի նախադասութենից բաղկացած հարցեր, մանաւանդ ստորին դասարաններում. այսպիսի երկար հարցով աշակերտը կդժուարանայ հասկանալ թէ ինչ է պահանջվում, կդժուարանայ խնդրի էութիւնը ըմբռնել։

6) Հարցերը որոշ պիտի լինին։ Անորոշ հարցերը ընդհանրապէս դժուարութիւն են տալիս աշակերտներին. որովհետև չգիտեն թէ ինչ պիտի պատասխանեն։ Օրինակ. ասացէք ինչ որ գիտէք բայի մասին, ինչ գիտէք մակբաների մասին և ուրիշ այսպիսի հարցերը չէ կարելի յաջողակ հարցեր համարել, իրանց անորոշ լինելու պատճառով։

7) Պէտք չէ չափազանց ընդհանուր հարցեր առաջարկել. որովհետև մեծ մասամբ անհասկանալի են աշակերտներին։ Չէ հարկաւոր նոյնպէս կրկին հարցեր տալ այսինքն այնպիսի հարցեր, որոնք մի անգամից երկու պատասխաններ են պահանջում։ Այսպիսի հարցերը թոյլ չեն տալիս աշակերտին մի բանի վերա իւր միտքը ամփոփել։ Աւելի լաւ է նախ մի հարց տալ, յետոյ միւսը։

8) Հարցերը պիտի կանոնաւոր լինին քերականօրէն, մանաւանդ մաքուր հայերէն ոճով պիտի լինին, որի դէմ շատ մեղանչումներ ու-

ուցիչները։ Բառերի կարգը այնպէս դասաւորված պիտի լինի, որ պարզ լինի թէ խնդիրն ինչ է։

9) Հարցերն առաջարկելու է բարձր, զատ և աղդու կերպով, շեշտելով թէ գլխաւոր բառերը առանձին հարցերի մէջ և թէ գլխաւոր հարցերը ուրիշ յուշ առնող հարցերի մէջ։

10) Լաւ մտածված և նպատակայարմար առաջարկված հարցը, պէտք չէ առանց կարիքի, առանց աշակերտի պատասխանին սպասելու, ուրիշ հարցով փոխարինել կամ նոյնանիշ բառերով լրացնել։ Հարցի այսպիսի փոխարինումն կամ նոյնանիշ բառերով լրացումն շատ անգամ աւելի մթնեցնումէ քան թէ պարզումէ հարցը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ։

(Մանկավարժանոցում հրատարակվեցաւ ընդհանուր հայեացքով մի նամակ Գ. Ճեմարանի նախկին հանգամանքների մասին։ Սորան մի անյաջող մանկամիտ պատասխան, անձների ազգանուններով, հրատարակվեցաւ Թիֆլիսի մի լրագրում։ Այժմ ստացանք նոյն պատասխանի հիմնաւորը հերքումն, որ և հրատարակումենք, ցաւելով միանգամայն, որ անհմուտ և մանկամիտ պատասխանողն առիթ տուեց խընդիրը մասնաւորելու։) Խմբ.

Նոր—Դարի 214 № կարդացի մի նամակ Ռամանից. շատ տարօրինակ էր նորա բովանդակութիւնը...։

Դարոնը սաստիկ զայրացել է Մանկավարժանոցում տրպված իւր ընկերի գրած նամակի վերա, որը համարձակել է «երբ դուրս եկայ Ճեմարանի կաշկանդող և ազնուութիւն վարակող մթնոլորտից...» խօսքերը ասել։ Որովհետև ես բաղդ չունիմ ձեր պատուական ամսագիրը ստանալու, ուստի ծանօթ չեմ վերոյիշեալ նամակի հետ, բայց երևի գլխաւոր կէտը լինելով պ.-ի մէջ բերած կտորը, կամենումեմ այդ մասին մի երկու խօսք ասել։

Ինձ թուումէ, որ պ.-ի գրածը լոկ կատակ է. երևի նա, քիչ համարելով Ճեմարանում պատահածը, կամեցել է լրագրութեան մէջ ևս նոցա ծաղրել։ (Բայց լրագրութիւնը խաղալիք չէ. գոնէ իւր գրածը ինքը պիտի հասկանար)։ Ես այլապէս չեմ հասկանում նորա վարմունքը։ Ինչ և իցէ։

Դարոնի կարծիքով, ոչինչ ազնուութիւն վարակող ազդեցութիւն չի ունենալ աշակերտի վերա, եթէ

խեղճ, անտէր գիւղացու արենախառն արտասուքով և դառն քրտինքով աշխատած և երկար տարիների ընթացքում կոպէկ—կոպէկ ժողովված հազարները մի որ և եղէ Նահապետոֆ և ընկերութիւնը, մի օրվան մէջ, նոյն իսկ իրանց աշակերտների աչքի առաջ, ստանումեն։ Ի՞նչի. որովհետև ուսուցիչները, երբ խօսք է լինում Ֆրանկլինի և կամ նորա նման անձնաւորութեան վերա, ամենասիրելի ածականներով են նկարագրում նոցա անձնանուիրութիւնը, անշահասիրութիւնը։ Այդ մասին երկարել չեմ կամենում. բաւական է յիշեցնել պարոնին, թէ ինչ էր մտածում նոյն իսկ ինքը (աշակերտութեան մեջոցին), երբ իւր ուսուցիչների բերանից իւրաքանչիւր անգամ «փող» «շահ» «անշահասէր» «ազնուութիւն» խօսքերն էին թռչում. . . ։ Բաւական ժամանակ է անցել այն օրից, որ պարոնը հեռացել է Հեմարանից. . . ։

Դառնանք ուսուցիչների անպատրաստ դասերը տալուն...։ Մի թէ սուտ է։ Լաւ չէ կարծ յիշողութիւն ունենալ. մի թէ ինքը չէր պահանջողներից մին, որ «բողոքի» մէջ յիշվի և ուսուցիչների մասին գրել— նոցա տարբեր կէսը դասին ներկայ չգտնվիլը, դասերից ուշանալը, ՝՝՝ չպատրաստվելը...» և այլն և այլն։

Զարմանալի է, որ պ. Վարդանեանի անունի մօտ և պ. Կոստանեանի անունը չէ դրել։ Ի՞նչպէս կարելի է մոռանալ այդպիսի մի չբնաբնոնի և պրոֆեսորի...։

Չէ՞ որ ծուլութեան մէջ նոքա մրցումէին...։ Բայց պարոնը, փոխանակ պարապ խօսքեր ասելու, լաւ կանէր եթէ մի փոստ բերէր, թէև նոյն իսկ պ. Վարդանեանի դռնէ մի անգամ դաս արտրաստելուն...։

Մթթէ Հշմարիտ չէ, որ պ. Վարդանեանը մոռնում էր ներս առանց իմանալու թէ ինչ պիտի անէ։ Մթթէ սուտ է, որ դասագիրքը (ընդհ. պատ. կամ ընդհ. գրական. պատմութեան կամ ռուս. գրական. պատմութեան) առաջը դնելով—նախ մատացածի կարդում, յետոյ թարգմանումէր։ Մթթէ սուտ է, որ նա աշակերտներին ասելի պարապեցնումէր լաւ Բէրլինում տեսած Վիլհէլմ կայսեր արած գօրահանդէսի նկարագրութեամբ, գերմանական լեզուի գեղեցկութիւնները գովելով, (իւր արած) Հանապարհորդութիւնների օգուտը ցոյց տալով—քան թէ իսկական առարկայով—պատմութեան էութեամբ։

Ես հաստատացած եմ, որ նորա աշակերտները այժմ էս գիտեն—թէ մեծ Պիտը էրէ-էլ, ա-ոջի հռետորն էր, որ փոքր Պիտը էրէ-էլ, ա-ոջի Հառաքսոն էր, որ Բիշէլիոն երևելի, առաջին գլուխն էր, որ Մազարինին—նորանից պակաս չէր (??) և այն և այն ուշիշ բազմաթիւ էրէ-էլ և ՝ն անունները, ա-մեամեծ (մեկտ) պատերազմները, ա-մեանոշանա-որ (մեկտ և բոլոր) դէպքերը և այն։ Բայց երբէք չէին կարող հասկանալ, թէ ֆրանսական յեղափոխութիւնները ինչպէս առաջացան, ինչ հետևանքներ ունեցան, ինչպէս Գերմանիան Գերմանիայ եղաւ, ինչումն է կայանում անգլիական յեղափոխութիւնների տարբերակ խաղաղ բնութեան պատճառները, և այն և այն, բայց նորա, ինչպէս ասացի, լաւ գիտեն թէ Նապոլէոնը շատ քաջ մարդ էր և աքսորվեցաւ...։ Հասկանալի է, որ այսպէսով, աշակերտների գլուխներում հաւաքվումէ մի շարք պատերազմների, թուերի, դէպքերի, անունների միմեանց խառնված, անկարգ...,

որով, բացի ուղիղ հայեացք չունենալուց պատմութեան վերա, առաջանումէ մի քաօսային շղթայ նոցա մտածմունքի մէջ...։

Կար մի ժամանակ, երբ Ճշմարիտ է Ճեմարանի մէջ տիրել էր Եւրոպա գնալու տենդը. այդ մի ընդհանուր ցաւ էր, որ ծանրանումէր ռուսիաբնակ Հայերի համարեա մեծագոյն մասի վերա (բայց այդ պ. Վարդանեանից առաջ էր)։ Տենդային հրապոյրով կարդում և պատմվումէր այն ամենը, ինչ որ Եւրոպային էր վերաբերվում...։ Պ. Վարդանեանը կրակի վերա միայն իւղ աւելացրեց, Եւրոպայում արած Ճանապարհորդական տպաւորութիւնները պատմելով անդադար, ահա այն սէրի պատճառը, որը պ. Փ. Վարդանեանը վայելումէր Ճեմարանում...։ (Բայց եթէ պարոնը կարծումէ, որ Փ. Վարդանեանի պատմած Եւրոպայումն է գտնվում Ոմանը—սխալվումէ, նա թող հաւատացած լինի, որ իւր հայրենի Ասիայից շատ հեռացած չէ. նա Ճմարիտ է գտնվումէ Եւրոպայում, բայց ոչ այն, որ պ. Փ.-ը խօսումէր, հապա այն, որը նա սովորեցնումէր...)։ Իմ կարծիքով պ. Փ. Վարդանեանը կարող էր լինել նշանաւոր վերակացու, բայց ոչ լաւ ուսուցիչ։

Պ. Կոստանեանի մասին պարոնը ոչինչ չէ յիշում։ Ի՞նչի, մի՞թէ նա ևս նոյնքան չոր և աղքատ պատմութիւնը (հայ գրականութեան) էր թափանցեցնում աշակերտների ուղեղի մէջ...։ Բայց քանի որ միւս ուսուցիչների մասին ևս պիտի ասեմ մի քանի խօսք, աւելորդ չէ և սորա մասին ասել...։ Սա ևս ծոյլ է, ինչպէս և Փ. Վ.-ը, բայց չունի ոչ վերջինիս տեղեկութիւնը և ոչ նորա գրաւիչ լեզուն և շար-

ժուն բնաւորութիւնը. ընդհանրապես դանդաղ և անհամ է խօսուածքը և այն այնքան ցածր, որ միայն ինքը կլսէր...։

Աւելորդ է ասելը, որ այն առարկան, որ աւելի մօտ պիտի լինէր մեր սրտին, աւելի զգուանք էր առաջացնում մեր մէջ. ոչինչ հետաքրքիր չկար այնտեղ...։ Պ. Կ-ը եթէ Աստուածային մի առանձին իմն ողորմութեամբ, մի օր պատրաստէր դասը, անշուշտ մնացած 20—30 դասը միայն նէյնիմ—նէյնիմ էր...։ Բայց ի մեծ ուրախութիւն աշակերտներին, պ. Կ-ը մեծ լաւութիւն և բաւականութիւն էր պատճառում աշակերտներին, լուր հեռանդութեամբ, որ տարվան մեծ մասն էր կազմում, և ուշանալով...(Երեկոյեան ուսուցչական երեկոյթ էր, իհարկէ զիշերվան քնի կորուստը պէտք առաւոտեան դասերի ժամանակից հանէր...)։ Դասի ժամանակ աշակերտները կամ քնումէին և կամ ուրիշ առարկայով զբաղում...։ Բայց այս բոլոր ասածից չպէտք է եզրակացնել, որ Ճեմարանի աշակերտները հայ մատենագրութեան հետ ծանօթ չեն։ Ընդհանրապէս. աշակերտները այնքան հասկանումէին, որ առելով այդ առարկայի ուսուցչին, նոքա իրաւունք չունէին և առարկան առելու, մանաւանդ որ պարտական են սովորելու... և ահա պարապ միջոցներին նոքա իրանք էին ուսումնասիրում առարկան...։ Մին նոյն կերպով վարվումէին և ընդհանուր պատմութեան և ռուս և ընդհ. գրականութեան պատմութեան հետ, (բայց քիչ էր վերջիններիս թիւը...)։ Պ. Կ-ը կարծես վերջերը ինքն ևս դգուել էր այդ առարկայից. նորագոյն գրականութեան պատմու-

թիւնը, որ ամենահեռաքրքիրն էր, այնքան համառօտ անցաւ, որ ոչինչ ընդհ. գաղափար չկազմեցին աշակերտները... (1)

Գալով պ. Պալասանեանին, կարող եմ միայն այս ասել, որ նա բարեխիղճ ուսուցիչ է. բայց նա էս ոչինչ մի առանձին արած չունի, որ այդ չը և ցոյց տայ. պատմութիւնը աշակերտների մտքի մէջ թափանցեցնէր. նորա պատմութիւնը միևնոյն Զաքչեանինն է—միայն այն տարբերութեամբ, որ հ. Զաքչեանը գրել է արևմտեան բարբառով, իսկ պ. Պալասանեանը նորան արևելեան բարբառի է վերածել։ Ինչպէս տեսնում էք, նա այս մասում շատ առաջ գնացած չէ մեր ազգային պատմութեան (դասագրքի վերա աւանդող) ուսուցիչներից...։ Բայց եթէ մի փոքր առաւելութիւն ունի, այդ միայն նորագոյն պատմութեան մէջ է. բայց այդտեղ էս, ցանկանալով աշակերտներին օգնութիւն—ամեն բան պայծառ լոյսի տակ է նկարագրում, որ իմ կարծիքով սխալ ուղղութիւն է։ Աւելի լաւ է աշակերտներին (որ 18—22 տարեկան երիտասարդներ են) ցոյց տալ մեր նախնիների լաւ և վատ կողմերը, նոցա պատճառներն ու դարմանները, քան թէ ինքնախաբէութեան մէջ մոլորեցնել...։ Նորա միայն լաւը տեսած, վարդագոյն յոյսերով ոգևորված լինելով, միայն ծայրայեղ էդէալիստն են դուրս գալիս. նորա անծանօթ են կեանքի և նորա

1) Շատ ցաւում ենք պ. Կոստանեանի մասին ասված այս խօսքերի համար։ Ճեմարանում երկու տարի միասին պաշտօնակից եղած միջոցին մենք նորան ամենևին այսպէս չենք տեսել, այլ բանիմաց և աշխատասէր ուսուցիչ։ Խմբ.

մուլթ կողմերի հետ, այդ պատճառով ևս կեանքի մէջ մտնելով, նորա ամենափոքր անյաջողութիւնները միայն յուսահատեցնումեն ինոցա. ամենամօթալի կերպով կորցնումեն իրանց գլուխը։ (Մեր խօսքը եհարիկ մեծամասնութեան վերա է)։ Բայց գիտութիւնը, մանաւանդ պատմութիւնը, աշակերտի մէջ պիտի այնպիսի մի հոգի ստեղծէ, որ բացի կեանքի ամեն տեսակ ալիքներին դիմանալուց, աշխատէ նոցա ջարդել...։

Ցիշենք, որ աշակերտները պ. Պաշասանեանին չեն սիրում, բայց յարգումեն։

Նոյնպէս խղճմտանքով էր կատարում իւր պաշտօնը պ. Ս. Մ-ը։ նորա մասին չունինք ասելու։ Աշակերտները նորանից քաշվումէին. թէ ինչն, ինքս ևս չգիտեմ...։

Իսկ ինչ կվերաբերվի պ. Նահապետովին, պ.ը ասումէ. «իբրև ուսուցիչ (մինիայն քիմիայի) լաւ է, իսկ իբրև տեսուչ Ռոյլ»։ Համաձայն եմ առաջին կէտի հետ, բայց երկրորդ կէտի մասին սէտքէ նկատեմ, որ պ. Ն-ը ոչ միայն Ռոյլ չէր, հապա զօրաւոր, և այն շատ զօրաւոր էր։ Ամբողջ խումբը մի մարմին էր կազմում (մասնաւոր բացառութեամբ)։ նոցա նպատակները, բոլոր ձգտումները, ուրեմն և ուղղութիւնները մի էին։ Այդ ուղղութիւնը, ինքնըստինքեան հասկանալի է, պիտի տերապետէր դասատուութեան, դաստիարակութեան մէջ...։ Դրողը պէտքը վաղուց հասկացած լինէր, որ մենք (ինչպէս և ինքը) բողոքեցինք ոչ թէ պ. Ն-ի Ռոյլ կառավարութեան դէմ, ոչ, հապա նորա ուղղութիւնն և նորան հասնելու համար («նպատակը կարդարացնէ

մեջոցը») սկզբունքի համեմատ գործադրած մեջոցներին դէմ...։

Ուրեմն եթէ պարոնը չէր հաւանում պ. Ն-ի «աղաղ-ՐՈՒԵՈՒՆ», չենք հասկանում ինչին է ծառայում ուսուցիչներին իւր անկոչ փաստաբանութիւնը։ Երևի երախտագիտութիւնը պարոնի մէջ նոր ոյժով է գարթել։ (որովհետև պ. Կ-ը և Ս. Մ-ը ամենավատ կերպով խաբեցին և խռովութիւնը աւելի զօրացրին իրանց գրգռեցուցիչ խօսքերով, որովհետև 36 հոգի անմեղ զոհ եղան այդ անհոգի արարածներին... որովհետև եկեղեցին և հասարակութիւնը զրկվեցան այնպիսի երիտասարդներից, որոնց 8 տարի կերակրել, աչքին պէս պահպանել էին և մի տարի յետոյ իւր ծոցը պիտի բանային նոցա առաջ գործելու համար, որովհետև և այլն և այլն, երևի սոցա համար է երախտագիտութիւնը...։ Պարոն, եթէ կամենում էք, ձեր ամենամեծ ապերախտութիւնը այն է, որ դուք բողոքեցիք պ. Նահապետոֆի և ընկ. դէմ. դուք ստորագրեցիք «բողոքին»...)։

Հասկացողին այս էլ բաւական է։

Մենք միտք չունէինք այսքան երկարել, բայց՝ակամայ գրեցի... Սակայն fais ce que dois, advienne que pourra.

Չենք կարող չնկատել, որ ոչ ոք չի ուրանայ ձեմարանի բարի և միանգամայն օգտակար նպատակը, մանաւանդ մենք, որ լիապէս վայելել ենք նորա շնորհը և ամբողջապէս մեր էութեամբ պարտական ենք նորան, բայց նորա ցաւերը նկարագրելով չկարծեմ, որ դորանով երախտագիտութեան դէմ մի բան արած լինինք։ Եթէ նորա մէջ գործող-

ները այսօր Ն-օֆ և ընկ. է, վայրը անշուշտ ուրիշն է, կամենումեմ ասել, որ Ճեմարանի գործիչները անդադար փոփոխվելու են, բայց Ճեմարանը ինքն երբև մի հսկայ մարմին—նա երկար տարիներ պիտի ապրի։ Ուրեմն բնականաբար նա առաջ պիտի գնայ, բայց առաջադիմութեան հաւանական արագութիւնը կախված է նորանից, թէ ո՞ր չափով և ո՞ր քան շուտ ենք հասկանում մենք պակասութիւնները և նոցա առաջն առնելու հնար որոնում...։ Այսպէսով ուրեմն, եթէ մենք կամենումենք նորա առաջադիմութեանը մի բանով նպաստել, այդ այն պիտի լինի, որ մենք կարողանանք նորա ցաւերը ցուցնել... Իսկ արժանաւորութիւններ երանք կվայլեն, զորա վերա հարկաւոր ևս չէ մատնացոյց անել...։

Բայց մենք կսխալվինք, եթէ կարծենք, որ ժողովրդի և մեր գործերին գլուխ կանգնողների ուշադրութիւնը հեռացնելով գործերի իսկական դրութենից, կարող ենք գործին օգուտ տալ. այդ կատարեալ ինքնախաբէութիւն կլինէր...։

Մի երկու խօսք ևս Նոր—Դարի խմբագրի ծանօթութեան առիթով։ Չգիտենք պարոնը ինչ աճնական հաշիւ ունի «Մանկավարժանոցի» խմբագրի հետ, բայց մենք կասենք, որ անվայել է մի խմբագրի, որի իւրաքանչիւր խօսքը ազնուութիւն է հընչում և որ միայն ազնուութեան անունով է գործում (ինչարկէ իւր խօսքով), այդպիսի մի բթամիտ ծանօթութիւն անել. նորա կարծիքով հասած երիտասարդը երաւունք չունի իւր շրջապատող հանգամանքներին քննադաբար վերաբերվելու, իւր ու-

սուցչի իւրաքանչիւր խօսքը արդար իւղի տեղ չընդունելու. որովհետև նա աշակերտ է (աշակերտը իրաւունք չունի իւր համոզումն ունենալու),—բայց երբ երեկվան տղան վեր է կենում և նորա թերթի միջոցով արատաւորումէ մի խմբի անուն, կամ գուցէ նոյն իսկ երջանկայիշատակ Ներսէս պատրիարքին կամ այս և այն անձնանուէր հասարակական գործօնին, (մինչև անգամ և նպաստ նոցա գործերի ամենայն գրուածը անտես առնելով) օհ, այն ժամանակ կարելի է, ամենայն մարդ իրաւունք ունի իւր համոզմունք ունենալու. հարկաւ, ազատամիտ թերթ է...։ Մինչնոյն ժամանակ խմբագիրը համարձակօրէն դեռ պնդումէ, թէ իւր թերթը անձնական, իւր կիրքերին ծառայող օրգան չէ...։

Մ. Պ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԴՊՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ։

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻ» ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ։

Ես դեռ անցեալ տարի Էջմիածնում եղած ժամանակս խոստացայ ձեզ հաղորդելու պարսկաբնակ Հայերի դպրոցական վիճակը մի ամփոփ յօդուածով։ Գուցէ դեռ երկար ժամանակ չկատարէի խոստմունքս, որովհետև միմեանց արագութեամբ յաջորդող տխուր երևոյթները, որոնցով լի է այժմ պարսկաբնակ Հայերի կեանքը, մարդի մէջ ոչ փափագ և ոչ ևս տրամադրութիւն են գրգռում, եթէ չստանայի «Մանկավարժանոցի» վերջին տեսրը։ Այդ

տեսարը վոքը ենչ սեթափեցրեց ինձ, ըստ որում ես տեսայ, որ ընդհանուր վհատութեան, բարոյական թմբրութեան ժամանակ, դուք ձեր առաջվան եռանդով, յոյսով և հաւատով գործումէք. դուք հաւատումէք ապագային, որով և երջանիկ կարող էք համարվել և ձեր օրինակով կամենումէք ասել, որ որքան տխուր և վհատեցուցիչ լինի մեր ներկայ կացութիւնը, բայց դարձեալ Faisons notre devoir, le reste est vanité: Ուրեմն ես ևս կատարեմ պարտքս, այն է խոստումս։

Պարսկաբնակ Հայերի ընդհանուր կրթական գործը յուի, վատ վիճակի մէջ է։ Այդ հանգամանքը առաջ է գալիս ժողովրդի չքաւորութենից։ Ամբողջ Պարսկաստանում այժմ հազիւ 50 հազար Հայ լինի։ Դոցանից մօտ 15 հազարը կեդրոնացած է Ատրպատականի նահանգում. Թավրիզում, Սալմաստում, Խոյի, Ղարադաղի, Ուրմիայի գաւառներում և գիւղերում, իսկ մնացածը ներքին Պարսկաստանի զանազան քաղաքներում—Թէհրան, Համադան, Նոր—Ջուղայ և շրջակայ գիւղեր, Բաշտ, Ղազվեն, Զանգաւ, Շիրազ և այլն։

Ամբողջ Ատրպատականում հայաբնակ քաղաքների և գիւղերի թիւը 118 է։ Դոցա մէջ գտնվումեն 3158 տուն Հայ։ Թեմի մէջ կան երկու վանք. Աստուածածին Թադէոս Առաքեալի վանքը և Դարաշամբի ս. Ստեփանոս նախավկայի վանքը և 92 եկեղեցի։ Քահանաների թիւն է 71։ Կան գաւառներ, օրինակ Մարաղայ և Սովուճբուլաղ (Պարսկական Քրդաստան), որտեղ քահանաներն անգամ թուրքերէն կամ քրդերէն են խոսում։ Այդ 3158 կամ

մոտ 15 հազար Հայ ժողովրդի դպրոցական վիճակը հետեւեալ կերպարանքն ունի։ Թավրիզի մէջ մի կեդրոնական դպրոց կայ, նիւթապէս ապահովված և բաւականին բարեկարգ դրութեան մէջ Արամեան անունով, որ գտնվումէ Ներսի կոչված թաղում, մի ծխական դպրոց ևս դրսի—Լիլավայ կոչված թաղում կայ։ Բացի դորանից կայ մի մասնաւոր ծխական դպրոց "Եղբայրսկերական" կոչված։ Օրիորդական դպրոց 3 հատ կայ, երեքն ևս ծխական։ Այնուհետև թեմի մէջ մի դպրոց կայ միայն Սալմաստում։

Թավրիզի Արամեան կեդրոնական դպրոցը բաղկացած է 1 նախակրթարանից, 1 պատրաստական-նից և երեք հիմնական դասարաններից։ Բոլոր աշակերտների թիւն 130 է, այսպէս—նախակրթարան—50, պատրաստական—30, Ա. դաս.—25, Բ. դաս.—15, Գ. դաս.—10։ Ուսանվող առարկաներն են. կրօն, հայկական լեզու, ռուսերէն, պարսկերէն և ֆրանսերէն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնագիտութիւն և երգեցողութիւն։ Այդ դպրոցը տալիս է միջակ կրթութեան հիմունքը և աւարտող աշակերտների մեծ մասը առևտրական գործունէութիւնն են ընտրում իրանց ասպարէզ։ Դպրոցը ազատ է բոլ ամենայնի օտար միջամտութիւնից, միայն ենթարկվումէ ժողովրդից ընտրված հոգաբարձութեան իրաւասութեանը, որի նախագահն է առաջնորդը։

Ուսման տարեկան վճարը 8 ռուբլի է, աղքատները ձրի։ Իսկ օրիորդական դպրոցը, որ միևնոյն հոգաբարձութեան և ուսուցիչների ձեռքով է կա-

ամփոփվում 3 դասարանից է բաղկացած. նախակրթարան (թիւ աշակ. 14), պատրաստական—10, առաջին դասարան—10։ Բոլոր աշակերտուհիների թիւը 34 է։ Առարկաները—կրօն, հայկական լեզու, թուաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, երգեցողութիւն և ձեռագործ։ Օրիորդական դպրոցի ծախսը Աբամեան դպրոցն է հոգում։ Դպրոցն ունի 4000 թուման կամ 12 հազար ռուբլի դրամագլուխ և մի երկու անշարժ կալուած, որոնք սակայն շատ քիչ եկամուտ են բերում։ Տարեկան միջտական եկամուտն է 4500 ռուբլի, հեռաւոր աղբիւրներից. դրամագլխի տոկոս—1650 ռ., ռուս տէրութեան յատկացած տարեկան օժանդակութիւն—450 ռ., Պարսից Շահի տարեկան ընծայ—670 ռուբ. աշակերտական թոշակ 800 ռուբլի։ Եկեղեցական արդիւնք մոմավաճառութեան 130 ռ., մասնաւոր անձնների մշտական օժանդակութիւն 800 ռ։ Ինչպէս տեսնումէք, Աբամեան երկսեռ դպրոցները նիւթապէս բաւականին ապահովված են։ Գալով Լեռնայ Թաղի երկսեռ ծխական դպրոցներին, պէտք է ասել, որ նոքա անապահով են, պահպանվումեն եկեղեցու և ժողովրդի արդիւնքով։ Աշակերտների թիւն է 85, իսկ աշակերտուհիների—35։ Հարկաւոր եմ համարում ասել, որ Թավրիզի Հայերի թիւը 400 տուն է։ Մնացած Ատրպատականի 2758 տուն Հայ ժողովուրդը, որ ցրուած է, ինչպէս ասացի, 117 քաղաքների և գիւղերի մէջ, ես գաւառների կրթութեան համար, միայն մի ծխական դպրոց ունի Սալմաստում։ Իրերի այդ վիճակին մէջ բողոքական և կաթոլիկ քարոզիչները հետաքրքիրամբ կարողանումեն

գրաւել դէպ ի իրանց դպրոցները Հայ մանուկներին։ Ես ձեռնպահ եմ մնում բացատրելու պատճառները, որոնք առաջացրել են այս տեսակ ցաւալի դրութիւն։

Դարով բուն Պարսկաստանի Հայերին, այսինքն այն թեմին, որ կոչվում է Պարսկա—Հնդկաստանի թեմ և գտնվում է Նոր— Զուղայի Ամենափրկչեան վանքի առաջնորդի հովուութեան ներքոյ, պէտք է ասել, որ նոքա բնակվում են 5 քաղաքների—այն է 1) Նոր—Զուղայ—371 տուն, 2) Թէհրան—75 տ., 3) Շիրազ—7 տ., 4) Բուշեռ—9 տ., 5) Համադան —40 տ., ընդ ամեն 502 տուն և 54 գիւղօրէիքի մէջ—բոլորն 2544 տուն, ուրեմն թէ քաղաքաբնակ և թէ գիւղաբնակ տների թիւը ընդ ամենն է 3046։ Այդ 3046 տունը բաղկացած է 18,975 հոգուց, որոնց 9966 արական, իսկ 9009 իգական սեռից։ Որքան մեզ յայտնի է, միայն երկու կանոնաւոր դպրոց կայ. մինը—Նոր Զուղայում, միւսը—Թէհրանում։ Նոր— Զուղայի դպրոցը իր գոյութիւնը պարտական է գեր. Առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոսին, և Զիլ— Սուլթան Շահի որդուց, որ Սպահանի կուսակալն է, օժանդակութիւն է ստանում։ Նոր—Զուղայում կայ և մի հայկական տպարան, որտեղ մօտ 10 գիրք է տպվել մինչև այժմ 1872 թ.ից սկսած։ Առաջնորդը աշխատումէ այժմ [ուելի ընդլայնել տպարանի գործունէութիւնը։ Վերևում մոռացայ ասել, որ Թավրիզում կայ և մի բաւականին հարուստ և ճոխ հայկական ընթերցարան, որտեղ ստացվումեն բոլոր հայ լրագիրները։

Մենք տեսանք, որ Ատրպատականի Հայերի թիւն

է 15,000, բուն Պարսկաստանի Հայերի թիւն 18,975 ուրեմն բոլոր Պարսկաբնակ Հայերի թիւը 33,975 է։ Պէտք է ասել, որ ոմանք աւելի, այն է 50 հազար են հաշուում։—Այս նկարագիրը ցոյց է տալիս, որ կրթութիւնը շատ նուազ է տարածուած պարսկաբնակ Հայերի մէջ։ Հարկաւոր է ուղարկել երկու հմուտ թեմական վերատեսուչներ և երկու փոխ—վերատեսուչներ, որոնք շրջելով քաղաքները և գիւղերը հաստատէին հայկական դպրոցներ։ Սպասենք, մինչև Աստուած կյարուցանէ մեր եկեղեցու համար մի սրտացաւ Կաթողիկոս, որը վերջապէս ուշք կդարձնէ պարսկաբնակ Հայերի թշուառ վիճակի վերայ։

Թաւրիզ։ Հ. Առաքելեան։

ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԷՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ—ՀՈԳԵՒՈՐ ԴՐՊՐԱՆՈՑԻ ՀԱԿԱՌՈՂԱՊԱՀԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ։

Վերջին ժամանակներս պահանջվումէ, որ առ հասարակ ամեն մի շինութիւն, լինի ուսումնարան, բնակարան և կամ խանութ, կառուցանվի առողջապահական պայմաններին համաձայն։ Այս պահանջը գլխաւորապէս վերաբերվումէ ուսումնարաններին, որտեղ մատաղ սեռունդն է կրթվում ու պատրաստվում։

Թէ որքան մեծ նշանակութիւն ունի առողջապահօրէն կառուցված ուսումնարանը աշակերտների համար—բաւական է ինկատի ունենալ Զվիցերիայի,

Ֆրանսիայի և մեզ Եւրոպական տէրութիւնների ուսումնարանները, որտեղի մանուկները, դուրս գալով ուսումնարանից, վայելումեն աշխուժութիւն և կատարեալ առողջութիւն։

Հայերիս վերաբերմամբ նոյնը չէ կարելի ասել, մենք դեռ ևս ուսումնարանների շինութեան վերա ուշք չենք դարձնում։ Մեզ համար այս գլխաւոր պահանջը երկրորդական է դարձել։ Ասածս ապացուցանելու համար, ուղղակի օրինակ եմ բերում, Ներսէսեան դպրանոցը, որ այնքան ապահովված է նիւթապէս, որ դժուար թէ ուսումնարանի հոգաբարձութիւնը պատՀառ բերէ նիւթականը։

Ներսէսեան դպրանոցը ամբողջ Կովկասում Գ. Ճեմարանից յետոյ մեր երկրորդ մեծ դպրոց է։ Սորա տարեկան եկամուտը մօտ 70,000 ման. է հասնում, բաղկացած է 3 նախակրթարաններից իւր զուգընթացներով և 7 սիստեմական դասարաններից, որոնցից երեքը I. II. III. ունին նոյնպէս զուգընթացներ։

Դպրանոցն ունի 800 աշակերտ, որոնցից 30 որդեգիր, մնացեալները երթևեկ են։

Թողնենք դպրանոցի մեզ կողմերը, որոնց մասին հետևաբար կխօսվի, տեսնենք միայն դպրանոցի շինութիւնը։

Այս շինութիւնն աւելի շատ նմանումէ իւր արտաքին ձևով մի քարավանսարային, քան թէ ուսումնարանին։ Բաւական է դռնից ներս մտնել և ահա մտնողը իրան դգումէ բանտի մէջ։ Ուսումնարանի և ոչ մէկ կողմը բաց է. չորս կողմը շինութիւն, մէջ տեղը դատարկ։

Շինութեան արևելեան, արևմտեան և հարաւային կողմերը երկյարկանի են, իսկ հիւսիսային կողմը երեք յարկանի։ Դասարանները գտնվումեն միջին յարկում, սենեակները, նայելով աշակերտների քանակութեանը, չափազանց փոքր են։ Համարեա բոլոր սենեակները անյարմար են երբև դասարան։ Արևելեան և հարաւային կողմը գտնված դասարանները ենթարկված են աղմուկներին, խառնաշփոթ ձայներին և փոշուն. որովհետև դասարանների պատուհանները նայումեն փողոցին։ Երբեմն աղմուկները այն աստիճան խանգարումեն, որ ուսուցիչը դաս պատմելու ժամանակ ստիպված է կանգ առնել, մինչև աղմուկի վերջանալը։ Ձիաքարշ երկաթուղու և կառքերի անցնելը, և սորա հետ արտաքնոցի գարշելի հոտը, որը հարաւային կողմը գտնված դասարաններին մօտ է, լրացնումեն անյարմարութիւնները։

Արտաքնոցին կից գտնվումէ I զուգընթաց դասարանը. պէտքէ երևակայել աշակերտների և ուսուցչի դրութիւնը, երբ օդափոխութեան համար բանումեն գաւիթը նայող պատուհանները։

Հիւսիսային կողմը գտնված բոլոր դասարանները մութ են և խոնաւ։ Մթութեան պատճառն այն է, որ պատուհանները նայումեն դէպի բակը. ձմեռը, երբ երկինքը ամպամած է, ա. և բ. դասերին այնքան մութ է լինում, որ վերջին նստարանի վերա նստող աշակերտները չեն տեսնում տախտակի վերա գրածները (լաւ կլինէր, որ գոնէ լապտեր վառէին։ Փոխանակ աշակերտներին վնասելու, մի թէ առաւել լաւ չէր լինի լապտեր վառելը, առանց ամաչելու)։

Արևմտեան կողմի սենեակները այնքան ամօթալի դրութեան մէջ են գտնվում. մէկ պատը հոմարեա ամբողջապէս խոնաւ է, և զարմանալին այն է, որ մինչև 1883 թ. այդ սենեակներից մին որդեգիրների ննջարան էր, իսկ միւսը—լուացարան։ Խոնաւութեան հետ միացնենք նաև գարշահոտութիւնը, որ տիրում է այդ սենեակներին մինչև այսօր։ Երևակայեցէք. մի փոքրիկ սենեակում, որը հազիւ թէ 25 քայլ երկարութիւն ունենայ, շարված են 30 մահճակալ, 30 որդեգիրների համար։ Ննջարանի օդը մշանջենապէս ասլականված է։ Բաւական է մի անսովոր մարդ մտնէ այդ սենեակները, նա անյապաղ գլխացաւ կզգայ, աչքերը կսկսեն պտտել և սիրտը խառնվել։ Ստորին յարկի մասին խօսելն աւելորդ է, քանի որ սենեակները խոնաւ են ու խոնաւութենից պատերը բորբոսած։ Իբրև օրինակ յիշենք որդեգիրների ճաշարանը։ Սա աւելի մի ախոռի է նման, քան ճաշարանին։ Սորա մէկ պատը այնպէս խոնաւ է, որ շատ անգամ ջուր է կաթում պատից։ Ճաշարանում խոնաւութիւնը մի կողմից, մթութիւնը միւս կողմից, շատ վատ տպաւորութիւն է թողնում մարդի վերա։

Զմեռ ժամանակ, երբ որդեգիրները սովորապէս $3^1/_2$ ժամին են ճաշում, ստիպված են լինում լամպերները վառել։

Մի փոքր յարմար վերին յարկն է, ուր տեղափոխել են այժմ որդեգիրների ննջարանը—սակայն սա ևս ազատ չէ պակասութիւններից. պատերը բարակ են, ձմեռը բաւական ցուրտ է լինում, որքան տաքացնեն, այնուամենայնիւ ջերմութեան աստիճանը 10—12 աւելի չէ բարձրանում։

Երբէք պիտի չմոռանայ Ներսէսեան դպրանոցի հոգաբարձութիւնը, որ պատիւ չէ քաշվանսարայ պահել։ Հոգաբարձութիւնը պիտի հասկանայ վերջապէս, որ 800 աշակերտի հետ գործ ունի, որոնք պիտի մի ժամանակ ազգին պիտանացու անդամներ լինին. առողջ տղաներ ընդունելով, ինչի են կամենում ազգին ֆիզիկապէս վնասված անդամներ վերադարձնել։

Երթևեկներն այնքան չեն վնասվում, որքան որդեգիրները, որոնք ամբողջ գիշեր և ցերեկ դպրոցի խոնաւ և դաշտելի սենեակների մէջ են անցուցանում տասնեակ տարիներ։

Ահա դպրանոցի այդ օրինակ հակառողջապահական շինութիւն է պատճառը, որ աշակերտներին ենթարկումէ հիւանդութեան—կրծքացաւի, ոսկրացաւի, աչքացաւի և կարճատեսութեանը մատաղ հասակում։

Լոգարութիւնը քանի անգամ բողոքեց։ Դեռ ևս 1876 թուին ազնիւ «Մշակը» մի խմբագրական յօդուած նուիրեց, որի մէջ յայտնումէր այն կարծիքը թէ լաւ է ուսումնարանի մահառիթ պայմաններից ազատել որդեգիրներին, վարձել նոցա համար մի աւելի յարմար բնակարան։ Միևնոյն ժամանակ նա գրումէր թէ անհրաժեշտ է նոր դպրոցի կառուցումն։ Վերջին ժամանակներս նոյն իսկ հոգաբարձու և բժիշկ պ. Բարայեանը նոյն հարցը արծարծել է դպրանոցի հոգաբարձութեան ժողովներում, սակայն այս ամենը մնացած է ձայն բարբառոյ յանապատի։

Ի՞նչ է մտածում հոգաբարձութիւնը։ Եւ ինչի

դպրոցասէր մանկավարժական խորհուրդը բացարձակ պայման չէ դնում հոգաբարձութեան առաջ աշակերտներին զետեղելու յարմար դասարաններում, որ կարողանան ուսումն առնել։ Mens sana in corpore sano.

ԱՐՏԻՒՐ։

Ս. ԽԱՉ ՔԱՂԱՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ։

Այս ըսելէս տեղիս Ծ. Հ. Երկսեռ դպրոցի 188⁴/₅ Թ. ելումուտքի հաշուի մատեանը, Թեմիս հոգեւոր վարչութեանը ուղարկելու նպատակով, պատրաստած լինելով, և միևնոյն ժամանակը ձեր ,,Մանկավարժանոցի,, անցեալ համարներից մէկում կարդացածս դպրոցական վարչութիւններին ուղղած, խմբագրութեանդ հրաւէրը, որ սոքա ուղարկեն իրանց ստանձնած դպրոցների տարեկան հաշիւը ի հրատարակութիւն և ի գիտութիւն հայ հասարակութեան, ի նկատի ունենալով, աւելորդ չեմ համարում իսկականից քաղուածօրէն հաղորդել խմբագրութեանդ հետևեալ համառօտ տեղեկութիւնը։

Ս. Խաչ քաղաքի երկսեռ դպրոցում այժմ ուսանումեն 88 աշակ., որից 17 իգական սեռից է։ Բոլոր աշակերտները բաժանված են 4 բաժանմունքի, որից վերջինը ա. դասարան է համարվում, 14 աշակերտներով, դեռեղված է առանձին դա-

սարանում։ Ա. բաժանման մէջ կայ 27 աշակերտ և զետեղված է առանձին դասարանում։ Բ. բաժ. 20 և գ. բաժ. 27 աշակերտներով։ Այս վերջին երկու բաժանմունք զետեղված են դահլիճում։ Աշակերտներից 4 հոգևոր կոչումն ունեցողներ են, 18—վաճառականի, 5— արհեստաւորի, 26—այգեպանի, 14—հողագործի, 6—ծառայողի և 15—որբ։ Դպրոցը ունի 3 ուսուցիչ, որոնցից 2 ուսել են Թիֆլ. Ներսէսեան ազգ. հոգ. դպրանոցում, իսկ երրորդը (կրօնուսոյց) Ղզլարի հոգևոր դպրոցում։ Երեքն էլ հայազն են և ռուսահպատակ։ Ուսանողումեն նոյն առարկաները, նոյն չափով, ինչ որ անցնումեն Ներս. ազ. հոգ. դպ. պատրաստական-ներում և ա. դասարանում։ Դպրոցին 1884 թ. յունվ. 1-ից մինչ 1885 թ. յունվ. 1-ը մուտքը եղել է—1683 ր. 57 կոպ., հետևեալ աղբիւրներից. քաղաքային (տնտեսական) վարչութենից նպաստ 1265 ր., տեղիս 3 եկեղեցիներից 385 ր., նախորդ 1883 թուականից աւելացած 33 ր. 57 կոպ., ընդ ամենը—1683 ր. 57 կոպ.։ Ծախք նոյն թուականին եղել է. ուսուցիչների ռոճիկ 1208 ր. 13 կ., պահպանին 93 ր. 50. կ., վառելափայտի 30 ր. 50 կ., ուսումնարանի նորոգութեան 73 ր. 29 կ., արտաքնոց շինել տալու և դատարկ գետնի շրջապատ փորել տալուն 42 ր., չքաւոր աշակերտների հագուստի 25 ր., ուսուցիչների ճանապարհածախք 60 ր., գրքերի համար 90 ր., մանր ծախք 48 ր. 45 կ.։ Ընդամենը 1670 ր. 87 կ., ծախքը մուտքից հանած 1885 թ. համար աւելանումէ 12 ր. 70 կոպէկ զուտ արդիւնք։

,, Աղբիւրի ,, անցեալ տարուան համարներից մէկում (3-դ) երկարօրէն խօսած լինելով մեր դպրոցներում և դպրանոցներում բնագիտական առարկաների դասատուութեան վատ ձևի և նորանից առաջացած և սպասելի վատ հետևանքների մասին, ի միջի այլոց, յիշել էի և այն միջոցները, որոնցով միայն կարելի կլինէր մեր դպրոցներում տիրող այդ թերութեան առաջն առնել, այդ ախտը բուժել։ Իմ այդ յօդուածներում յիշել էի, որ մեր ուսուցիչները եթէ ուրիշ կերպ չեն վարվում իրանց ստանձնած բնագիտական առարկաները աւանդելիս, շատ հասկանալի է, և ուրիշ կերպ չէր կարող լինել։ Մեր դպրոցները կամ նոյն իսկ դպրանոցները զուրկ են դեռ այն միակ հարստութենից, ինչ գանձից, որով պարծենում են այսօր եւրոպական այլազգի դպրոցները, այն է նոցա դպրոցների բնագիտական ժողովածուները (коллекція)։ Որպէս զի բնագիտական առարկաները մեր դպրոցներում աւանդող ուսուցիչների գործին մասամբ մի թեթև ծառայութիւն մատուցած լինիմ, ես վերոյիշեալ յօդուածս գրելու օրից, ձեռնամուխ եղայ Ա. Պ. Կիրպոտէնկոի կազմած յիշեալ ժողովածուները պատրաստելու ձեռնարկը թարգմանելուն, որը և վերջացրած է. միջոցներս ներելուն պէս պիտի հրատարակեմ։

Մեզնից դուցէ ամեն մէկը խոստովանի, որ յիշեալ ժողովածուների կարիքը զգալով, իւր կեանքում քանի մի անգամ սկսած է նոցա կազմել, բայց ժողովելու և պատրաստելու եղանակը իմացած չլինելով, ապարդիւն են անցել վերջում թէ

ժողովված բոյսերը և թէ միջատները, որոնց կարճ ժամանակից յետ հոտելով հարկ է եղել ձգելու։ Այս տողերս իմ սեփական ձեռով արած անյաջող փորձերիս վերա հիմնված եմ գրում. չեմ կարծում, որ նոյնը մեր ուսուցիչներից շատերի հետ պատահած չլինի։

Ուսուցիչների և աշակերտների ձեռով ,,ուսումնագրասանքների,, ժամանակ կազմած բնագիտական և բուսաբանական այդ ժողովածուները հասկանալի է թէ որքան մեծ և միևնոյն ժամանակ անհրաժեշտ գանձ պէտք է համարվին մեր դպրոցներում, որոնց շատ հեշտութեամբ կարելի է կազմել թարգմանութեանս մէջ յիշված միջոցներով, ճշտութեամբ հետևած լինելով միայն այն ամեն կանոններին և միջոցներին, որոնք մի առ մի յիշված են այնտեղ։

Այս պարապմունքը շատ օգտաւէտ է նաև չափահաս աշակերտների համար, որոնք ամառուան արձակուրդների ազատ ժամերից մի քանիսը մեծ ուրախութեամբ կնուիրէին այս զուարճալի պարապմունքին։

Ցարգելի պաշտօնակիցներ, ձեր անցեալ անփորձութիւնը և անպատրաստականութիւնը թող ամենևին վհատելու տեղիք չտայ ձեզ։ Առէք ձեր ձեռքը այս փոքրիկ ձեռնարկը և վստահօրէն ձեռնարկեցէք գործը, երբ ամեն մի օրինակում լուրջ և խոհեմ կերպով կհետևէք սորա խորհուրդներին, մի տարուան ձեր աշխատութենից ակնյայտնի կտեսնէք բնութեան երեք թագաւորութիւններից կազմած (թէև ի հարկէ առ այժմ ոչ հարուստ) ձեր

ժողովածուները, որոնց կազմող ամեն մի բաժինը տարիների ընթացքում հետզհետէ հոխացնելով, վերջում դուք էս այնպիսի պատրաստի և կատարեալ ժողովածուներ կունենաք, որպիսի այժմ ունին ռուս և ուրիշ ազգերի մեծ գրավաճառները և որոնց ամեն մի օրինակը այսօր մօտ 50 տարի ընթացքով է վաճառվում նոյն տէրութիւնների մէջ եղող դպրոցներին։

Մեր գրականութիւնը առհասարակ աղքատ լինելով բնապատմական հրատարակութիւններով, հետևապէս և գիտական բառերով, ուստի նախ քան թարգմանութեանս հրատարակութիւնը, (որպէս զի աւելի յաջողած լինի նա) անհրաժեշտ համարեցի խնդրել յարգելի խմբագրութենից, որ „Մանկավարժանոց", մեջտեղով հրատարակէք թարգմանութեանս մէջ պատահած գործիքների, բոյսերի, միջատների և հանքերի վերաբերեալ գիտական բառերն ու անունները։ Սոցա հայերէնի փոխադրել կխնդրեմ մեր մասնագէտ բնագէտներից հայկական լեզուին յատուկ և ներդաշնակ բառերով։ Այս գործում պակաս չեն օգնի նաև մեր գաւառական քաղաքների և գիւղերի ուսուցիչները, ժողովրդի մէջ գործածվող անունները լենք յայտնելով։

Ցիշեալ աշխատութեան մէջ լենք օգնող իւրաքանչիւրը մի օրինակ ձրի կստանայ իմ թարգմանութենից, և ազգանուններն էս շնորհակալութեամբ կյիշվին նորա վերջում։ Լիայոյս եմ, որ մեր բնագէտները և իմ պաշտօնակից յարգելի ուսուցիչները չեն զլանայ այս փոքրիկ աշխատութեան մէջ,

մեջոցները ներելուն պէս, ձեռքից եկածի չափ, իրանց օգնութեան ձեռքը ինձ կարկառելու, որով թէ թարգմանութեանս օր առաջ լոյս ընծայելուն նպաստած կլինին և թէ դպրոցական գործին մի թեթև ծառայութիւն մատուցած։

Այս օրից բացվումէ յիշեալ թարգմանութեանս բաժանորդագրութիւնը. գինն է 40 կոպէկ։ Հասցէս. Черезъ Прасковею въ г. Св. Крестъ (Став. губ.). Учителю ,арм. дух. учил. Гр. Ходжамирянцу.

Ուսուցիչ Գ. Խոջամիրեան.

Փառք Աստուծուն։ Դպրոցական գործին անհերեւի և վշտալի անտարբերութիւն ցոյց տուօղ հայ ուսուցչական դասից գոնէ քանի մի անձներ սկսումեն ընդհատել լռութիւն և աջակցել Մանվարժանոցին թէ բաժանորդագրութեամբ և թէ աշխատակցութեամբ։ Բաղդաւորութիւն կհամարէ երան Մանվարժանոցը, եթէ կկարօղանայ հայ ուսուցիչներին պատած մահառիթ սառնամանիքը, երանց մանկավարժական պարապմունքի և ընթերցանութեան վերաբերմամբ, հալեցնել իւր ջերմութեամբ։

Երբ խմբագրութիւնս կամենումէր այս տեսրում Ս. Խաչ քաղաքի դպրոցի նախկին տեղեկագիրը հրատարակել (մենք երբէք չենք մոռացել Ս. Խաչեցիների գեղեցիկ ոստուածասէր և բարեսէր ջերմեռանդութիւնը) ստացանք ներկայ տեղեկութիւնները, որ և յօժարութեամբ հրատարակումենք, նորից հաւատացնելով հայ դպրոցական վարչութիւնները կամ ուսուցիչներին հետևել օրինակին և գրել դպրոցների տեղեկագիրը, նոյնպէս յոդուածաբաբ,

ինչպէս հրատարակեցինք Եկատէրինոդարի դպրոցի նախկին տեղեկագիրը։ Պ. Խօջամիրեանը չէ անուանում Ս. Խաչ քաղաքի թէ միւս ուսուցչին և թէ կրօնուսուցչին, և ոչ իւրաքանչիւրի ստացած ռոճկի քանակը։

Ի դէպ. Ագուլիսի ուսուցիչներից ոմանք խոստացան աշխատակցել։ Ի՞նչի խօսքի տէր լինել երանց պարտք չհամարեցին...։

Որովհետև հայ ուսուցիչներից շատ սակաւներ գիտեն լատիներէն և դժուար թէ կարօղանային հայերէն թարգմանել պ. Խօջամիրեանի առաջարկած լատիներէն բառերը թէ կենդանիների և թէ բոյսերի անունները, մենք աւելորդ համարեցինք հրատարակել, մանաւանդ որ տպարանում չկան բաւականաչափ, լատիներէն տառեր նոցա հրատարակելու համար։ Մեր խորհուրդն այս է, որ պ. Խօջամիրեանն ինքն որոնէր բառարանի մէջ կամ Վենետիկում տպված որևիցէ բնագիտական ձեռնարկում նոյն բառերը և այնպէս յարմարեցնելով հրատարակէր։ Խմբ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ։

Այս անգամ Մանկավարժանոցը ուշացաւ փոքր ինչ. պատճառն ամսագիրն Ախալցխայում տպելն էր։ Պ. Ղալամքարեան ունէր փոքրիկ տպարան (մի մամուլ և մի քանի գրվանքա տառ № 12) տոմսակները, այցեքարտոմսեր և այլն տպելու։ Ամսագիրը տպելու համար հարկաւորվեցաւ քանի մի փուդ տառ իւր պարագաներով բերել տալ։ Ուստի Մանկավարժանոցն օգտուէտ համա-

ըեց փոքը ինչ ուշանալ հրատարակութեամբ, մինչեւոյն ժամանակ սկզբնապատճառ դառնալ Ախալցխայի փոքրիկ տպարանը ընդարձակելու, գիրք կամ ամսագիր տպել կարողանալու չափով։ Խմբագրութիւնս կյուսայ, որ Հայկական մի տպարանի ընդարձակվելու ընդհանուր օգուտը ինկատի ունենալով, ընթերցողները ներողամիտ կլինին Մանկավարժանոցիս ուշանալու համար։

Արևելք օրագրում (1885, յունվարի 10) կարդացինք մեր ցանկալի հոգեւոյս Ներսէս Պատրիարքի անունով Կ.պոլսում հիմնարկելի դպրոցի հանգամանքները, որ և. ամենախորին համակրութեամբ հաղորդումենք ընթերցողներին։

,,Գոհութեամբ կը տեսնենք թէ «Ներսէս Վարժապետեան»Ուսումնարանի և Կեդրոնական Վարժարանի Մասնախումբը լրջօրէն գործի ձեռնարկած է, և թէ Նոր Տարին կը խոստանայ շատ արդիւնաւոր լինել Ազգին, քանի որ գօրաւոր յոյսեր կան թէ յիշեալ երկու Կրթարանք պիտի կրնան բացուիլ ներկայ տարւոյն մէջ իսկ։ Մասնախումբն, իւր անդամոց յանձնառած նիւթական ազգային հանգանութեան դիմելու պէտքն զգացած և զայս հրաւիրած է իւր ցայտարարութեամբ, զոր ազգային լրագիրք հրատարակեցին։ Սա յիրաւի, գործը լոկ անհատական կամ ընկերական հանգամանք մը չունի. այլ որոշապէս հանրային հանգամանք մը կը կրէ։ Կեդրոնական Վարժարանը կատարելապէս հանրային հաստատութիւն մը պիտի լինի, որոյ վարիչք պատասխանատու են ազգային Վարչութեան։ Ներ-

սէս Վարժապետեան Ուսումնարանն Ազգին հանգուցեալ Պատրիարքին անուան կանգնեալ յիշատակարան մը պիտի լինի, և աւելորդ խսկ է բացատրել թէ այդպիսի յիշատակարան մը լոկ անհատական հանգամանք չիկրնար ունենալ։ Վերջապէս, Մասնախումբը վայելուչ շրջան մը պիտի կանգնէ հոգելոյս Պատրիարքին գերեզմանին վրայ, և անշուշտ շատ ազգայիններ վարձաքոյ պիտի լինին մասնակցելու այսպիսի շնորհեան մը ծախուց։ Մասնախումբը կատարելապէս օրինաւոր կուսանի մը վրայ կը գտնուի, Ազգ. Վարչութեան հաւանութիւն և պաշտօնական վաւերացումն ստացած լինելով իւր գանազան ձեռնարկութեանց համար։ Վարչութիւնն ընդ երկար կշռեց խրնդրոյն ամեն կողմերն, և որոշեց իւր կողմէ քաջալերել Մասնախմբին ստանձնած գործերն, որք պիտի կատարին իւր հսկողութեան ներքեւ։ Հետևապէս, այլ ևս ոյժ չունին այն առարկութիւնք որք յիշեալ ձեռնարկութեանց դէմ կը լինէին ազգային իրաւասութեան և հսկողութեան շրջանակէն դուրս մնացած նկատելով զայնս։ Այսպիսի հանրօգուտ ձեռնարկութեանց նիւթապէս աւելի կամ նուազ օժանդակելու կարող ազգայիններ կրնան գտնուիլ, որք տակաւին զլանան իրենց օժանդակութիւն։ Բայց այնպիսիք չպիտի կրնան երբէք իրենց ձեռնապահութիւնն արդարացնելու նպատակաւ առաջիկայ թէ ազգային օժանդակութեան դիմող Մասնախումբն ասլօրէն ձեռնարկ մը կընէ, կամ այնպիսի ընթացքի մէջ կը գտնուի որ արժանի չէ ազգային քաջալերանաց։

Ընդհակառակն, որչափ աւելի խորհինք ձեռնարկեալ գործին և ձեռնարկող մարմնոյն վրայ, կը հաստատուի մեր համոզումն թէ Ազգը պարտի սիրայօժար մասնակցել Կեդրոնական Վարժարանի և Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի բացման և պահպանման, ինչպէս նաև կառուցանելի շիրմին ծախուց։ Կեդրոնական Վարժարանի մը օգուտներն և ստիպողական պէտքն ոչ ոք ժխտած է երբէք։ Եթէ Մասնախումբը պահ մը խորհեցաւ ձեռնթափ լինել այս հաստատման գործով զբաղելէ և իւր բոլոր ոյժն յատկացնել Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի բացման, մնակ պատճառն այն էր որ Վարչութեան հետ չէր կրնար համաձայնիլ Կեդրոնական Վարժարանի բացման համար։ Բայց այժմ որ այդպիսի համաձայնութիւն մը գոյացած է բարեբաղդապէս, Մասնախումբն անկեղծապէս պիտի չանայ ըստ կարի շուտով բանալ Կեդրոնական Վարժարանը։ Վարչութիւնն առ այս պայմանաժամ դրած է մինչև սեպտեմբեր ամիսը. բայց մեք կը յուսանք թէ կարելի պիտի լինի աւելի կանուխ բանալ զայն։ Բայց Կեդրոնական Վարժարանը լոկ ցորեկեայ կրթարան մը պիտի լինի. մինչ Ներսէս Վարժապետեան Ուսումնարանը գիշերօթիկ պիտի լինի դպրաւորապէս, և որովհետև պիտի կրնայ ձրիաւարժ ու կիսաթոշակ աշակերտներ ընդունիլ բաւական մեծ թուով, տեղացի և գաւառացի աղքատիկ բայց ուշիմ ուսանողներու համար կրօք նախընտրութիւն մը պիտի լինի։ Ցաւտնի է արդէն թէ այս Ճամբու մէջ, որչափ օգտակար եղած էր Շահնազարեան վարժարանն, և այժմ իսկ որչափ

օգտակար կը հանդիսանան Պերպերեան և Գուրգենեան վարժարանք։ Այս այլ և այլ կրթարաններու ընծայած օգուտները գաղափար մը կրնան տալ առաւել ընդարձակ միջոցներով հիմնուած և առաւել ապահով հիմանց վրայ հաստատուած նոր կրթարանի մը հաւանական օգուտներուն վրայ։

Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի մէկ յատուկ նշանակութիւնը պիտի լինի այն անուն, որում նուիրուած է։ Ո՛չ միայն հոգելոյս Պատրիարքն ամեն արժանիք ունէր որպէս զի ազգային կրթական հաստատութիւն մը նուիրուէր իւր անուան, այլ նաև. Ազգին միշտ սիրելի մնացած Պատրիարքի մը անունն այսպիսի հաստատութեամբ մը յաւերժացնելու որոշումն ինքնին մեծ օգտակարութիւն մը ունի, որ անժխտելի է։ Ներսէս Վարժապետեան Ուսումնարանը պիտի լինի շօշափելի ապացոյց մը թէ հայ ազգը գիտէ գնահատել իւր բարեւոյն համար աշխատողներու ծառայութիւններն, և թէ գէթ յետ մահուան, արամադիր է անմահացնել նոցա յիշատակը։ Շատ պայմաններ հարկաւոր են որպէս զի ժողովրդի մը մէջէն մեծ մարդիկ ծագին. բայց այդ պայմանաց գլխաւորներէն մին սա է որ այդ ժողովուրդն իսկ ճանաչող և գնահատող լինի մեծութեան։ Տիխիսի Ներսէսեան Կրթարանը մեր Կաթողիկոսները պէտք մղէ Եկեղեցւոյն նոյնչափ անձնուիրութեամբ ծառայելու, որչափ մեծահռչակ Կաթողիկոսն, որոյ անուան նուիրուած է այդ հաստատութիւն։ Ներսէս Վարժապետեան Ուսումնարանն ևս մեր ապագայ Պատրիարքաց պիտի յիշեցնէ թէ հայ ազգն, ամենէն տագնապալի

ժամանակներու մէջ իսկ, կարող է գնահատել արժանաւոր, անշահախնդիր Պատրիարքի մը արժանիքն։ Իւր մեծ մարդիկը գէթ յետ մահու յարգել գիտնալ ամէն ժողովրդի պարտքն ու պատիւն է միանգամայն։ Ռոպէրդ Քոլէջի դասատուներէն պրոֆէսոր Գրոսվէնոր Նէ- Նոր Օբ-էրվէր լրագրոյն դեկտ. 25-ի թիւոյն մէջ հրատարակելով կենսագրական յօդուած մը Հայոց Հանգուցեալ Պատրիարքին վրայ, սապէս կեզրակացնէ։ «Ի փառս Հայաստանեայց Լուսաւորչական վաղեմի Եկեղեցւոյն յիշատակելի իրողութիւն մ'է որ իւր այս խոնարհութեան և տկարութեան աւուրց մէջ իսկ կրցած էր արտադրել հանգուցեալ Ներսէս Պատրիարքին չափ անշահախնդիր և համեստ մարդ մը, այնքան բարձր մտօք օժտեալ և կատարելապէս քրիստոնավայել վարուք ու բարուք։ Նոյն Եկեղեցւոյն համար աւելի ևս պարծանաց պատճառ մ'է և միանգամայն յայտարար նշանն է Առաքելական Ճշմարտութեան զոր Հայոց Եկեղեցին դեռ կը պահէ յինքեան սա իրողութիւն թէ, այդպիսի մարդ մը արտադրելէն յետոյ, կրցաւ գնահատել նորա արժանիքն, և վարձատրեց զնա, կոչելով եկեղեցական բարձրագոյն պատուոց զորս իւր ձեռքն էր տալ։ Որքան աւելի պատուաբեր պիտի լինի մեր ժողովրդեան, եթէ, ցորեկեայ և դիշերօթիկ կանոնաւոր կրթարան մը կանգնելով ի յիշատակ հանգուցեալ Պատրիարգին միանգամայն ապացուցանէ թէ ոչչափ կը գնահատէ իւր Եկեղեցւոյ մէկ մեծանուն Հայրապետին արժանիքն, ինչպէս նաև իւր ազգային դաստիարակութեան արժէքն։

Այս ամենայն մտածութեամբ, ազգային նկ-
թական և բարոյական քաջալերանաց արժանի՞կը
համարին Կեդրոնական Վարժարանն և Ներսէս
Վարժապետեան Ուսումնարանը բանալու կրթա-
կան կրկին ձեռնարկներն։ Եւ ոչ միայն այս ձեռ-
նարկք ինքնին արժանի են քաջալերանաց, այլ
նաև զանոնք ի գործ դնել յանձն առնող մարմինն
ամենայն վստահութեան իրաւունք ունեցող անձե-
րէ բաղկացեալ է։ Ասոնք պատուաւոր վանական-
ներ և սեղանաւորներ են, որք իրենց հետ առած են ժամանակիս ուսեալ երիտասարդներէն մի
քանի անձեր, և այսպէս ձեռնհասութեան ու վըստահելութեան ամեն տարրերը կը ներկայացնեն։
Ասոնք նոյն մարդիկն են որ օրինակելի իմաստութեամբ հանգանակեցին և գործածեցին 36,000
ոսկւոյ պատակաւելի գումարն Հայաստանի վերջին
սովուն ատեն։ Նոյն մարդիկն են նաև որ կը վարեն Ս. Փրկչեան ազգային Հիւանդանոցը։ Վերջապէս, իրենց պատուաւորութեան և կարողութեան վրայ
ամենքս թէ յաջողապէս իգլուխ պիտի հանեն նաև իրենց այժմու ձեռնարկներն, եթէ միայն Հայ ժողովուրդը կամենայ որ յաջողին այս ձեռնարկք, ինչպէս Հայ
ժողովուրդը կամեցաւ և յաջողութեամբ պսակեցան նոյն անձանց մեջտեղաւ կատարուած ուրիշ ազգային
ձեռնարկութիւնք։ Ուստի մենք ևս այս բարեյաջողութեան համար կոչում կընենք մեր ազգայնոց։ Ամեն ոք իւր դրացմանց ու կարողութեանց չափով
պարտական է օգնել Գործադիր Մասնախմբին որ
պատրաստ է սիրով ընդունիլ ամենափոքր նպատա-

ներն իսկ, գործին ըստ կարի ժողովրդային հանդամանք մը տալու փափագով։ Եւ չենք կարծեր որ գտնուի զգայուն Հայ մը, որ ինչ որ ալ լինի ժամանակիս նեղութական տագնապին ծանրութիւնը, ոչ և իցէ նպաստ մը զլանայ վասն բացման Կեդրոնական Վարժարանի, վասն հաստատման Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի և վասն կառուցման վայելուչ շիրմի մը հանգուցեալ մեծանուն Պատրիարքին գերեզմանին վրայ։

Գեր. Գէորգ. Ե. Վարդ. Ռուսճուքլեանի կարճատև տեղապահութենից յետոյ, Կ.պոլսի Պատրիարք ընտրվեցաւ Սրբ. Յարութիւն Արքեպ. Վեհապետեանը։

Այս ընտրութեան վերաբերմամբ Արևելք յետագայ խմբագրական յօդուած հրատարակեց։

«Առաջիկայ ուրբաթ օր Ազգային Երեսփոխանական ժողովը պիտի գումարի Մայր Եկեղեցւոյ մէջ, հոգելոյս Տ. Ներսէս Պատրիարքին տեղ նոր Պատրիարք մ' ընտրելու։

Իբրև ընտրելի կը խօսուի այժմ գլխաւորապէս երեք եկեղեցականներու վրայ, որք են. Գեր. Տ. Յարութիւն արքեպ. Վեհապետեան, Գեր. Տ. Խորէն արքեպ. Նար-Պէյ, և Գեր. Բարդուղիմէոս եպ. Պրուսայու։

Մենք ընտրելի առաջարկած ենք զԳեր. Վեհապետեան, և կը պնդենք մեր առաջարկութեան վրայ։ Ըստ այն ամեն տեղեկութեանց զորս կրցած ենք ստանալ Ն. Գերապատուութեան վրայ, կը կարծենք թէ ժամանակիս յարմարագոյն Պատրիարքը պիտի լինի Կարնոյ նախորդ Առաջնորդը։— Վեհապետեան Սրբազանի եկեղեցասիրական ու մարդասիրական զգացմանց մասին նոր ապացոյցներու չենք կարօտիր. զի եկեղեցական դասն ամբողջապէս կը վկայէ այս զգացմանց, քանի որ իր գրեթէ միահամուռ քուէն տուաւ նմա Համագումար ժողովոյ մէջ։ Յարութիւն Սրբազան կը գտնուի թէ Համագումար և թէ Քաղաքական ժողովոց ցուցակներուն գլուխը։—Յարութիւն Սրբազան, թէև տարիքոտ, բայց ժամանակիս զարգացման անբն-

տել անձ մը չէ։ Արկածալից կեանք մը վարած և շատ հմտութիւն ստացած է։ Գիտէ հայերէն, արաբերէն և անգլերէն, զոր ուսած էր ի պատանեկութեան, Ռոպէրտ Քոլէճի յառաջընթաց Պ. Համլինի դպրոցին մէջ։—Քայ կը խօսի թուրքերէն, և հմուտ է Տէրութեան օրինաց. երկու հանգամանքներ, որք շատ կարևոր են Կ. պօլսոյ Պատրիարքին, իբրև յարաբերութեանց միջնորդին ընդ Բ. Դրան։—Իւր ազգային երկարժամանակեայ պաշտօնավարութեան մէջ, թէ կեդրոնն և թէ գաւառներն՝ անձամբ տեսնելու և քննելու առիթ ունեցած, և վարչային փորձառութեանց զանձ մը դիզած է, որ նմանապէս շատ հարկաւոր է մեր Ազգային Վարչութեան նախագահել կոչուած եկեղեցականի մը։—Ի վերջոյ, 20 տարիէ աւելի առաջնորդութիւն ընելով յաւագոյն Վիճակաց մէջ, եթէ աւելի կամ նուազ հարստութիւն մը դիզած է, զայն ալ Երուսաղէմի վանքին կտակելով անշահախնդրութեան փորձ մը տուած է։—Դեր. Ցարութիւն Սրբազան Ճանչուած է մի քիչ խստաբարոյ եկեղեցական, և իւր այս բնաւորութեամբ ևս շատ օգտակար կրնայ լինել Ազգին, կարգապահութեան ամենուրեք բաւական թուլացած կապերն ամրապնդելով ի նորոյ։

Ն. Դերապատուութեան վրայ արդէն հրատարակեալ կենսագրական տեղեկութեանց այս գլխաւոր և անժխտելի կէտերն եթէ կը յիշեցնենք, ցոյց տալու համար է թէ որչափ իրաւունք ունինք պնդելու մեր առաջարկած Ընտրելւոյն վրայ։ Որոշումն Ազգային Երեսփոխանաց իմաստութեան թողուած է, և բոլոր Ազգն այսպիսի ծանրակշիռ վայրկեաններու մէջ կը յուսայ որ Տեարք Երեսփոխանք, առանց անձնական նկատմանց, առանց երկրորդական հաշուոց, միայն Ազգին ու Եկեղեցւոյն բարիքը մտածելով և ժամանակիս բացառիկ պահանջումներն ենկատ առնելով պիտի տան իրենց քուէն։ Ցաւալի է որ ազգային կենաց համար մեծ կարեւորութիւն ունեցող այսպիսի առիթներու մէջ նիւթական ակնկալութիւնք և դրամական վարձատրութիւնք ևս դեր մը կը կատարեն լրագրական և

պարտականական ինչ ինչ շրջանակներու մէջ։ Վստահ ենք սակայն թէ Տեարք Եբեսփոխանք զերծ կը մնան այս կարգի մոլորեցուցիչ ազդեցութիւններէ։» (Յունվարի 19, 1885)։

Մանկավարժանոց հրաւիրումէ բարեսէր անձերի ուշքը Վան քաղաքի Խնամ. Ընկեր. Որբանոցին, որի տեսուչ մեծ. պ. Համբարձում Սրամեանը գովելի մարդասիրական եռանդով 20 որբ և աղքատ մանուկներին խնամումէ և կրթումէ։ Զգայուն Հայն իւր համակրական նուէրով Որբանոցի մէջ պատսպարված անտուն, անտէր, անհայր, անմայր 20 հէր մանուկների խնամարկութեանը և կրթութեանը նպաստած կլինի։ Մանկավարժանոց յանձն է առնում նուէրները հասցնել Վանի Որբանոցին, եթէ նուիրատուներն իրանք կդժուարանան ուղղակի Վան ուղարկել իրանց նուէրը։

Մարտի 6-ին կէսօրին, տէրութեան տնօրէնութեամբ, փակվեցան Ախալցխայի երկսեռ Կարապետեան և Եղիսաբէթեան հոգևոր դպրոցները, պ. գաւառապետի ձեռով։

Մարտի 8-ին և 10-ին փակվեցան Ախալցխայի շրջակայ գիւղերի բոլոր ծխական դպրոցները։

Այս տարի Ախալցխայի երկսեռ հոգևոր դպրոցների հարիւր աշակերտներին և աշակերտուհիներին պատրաստեցինք, հոգաբարձութեան աջակցութեամբ, Ախալցխայի Հայերի նուէրներով համազգեստներ, կօշիկներ, գլխարկներ, գլխնոցներ, գուլպաներ և այլն։

Շնորհակալութեամբ ստացանք պ. Գ. Շէրէնցի Սրտի թարգման անունով բանաստեղծութիւնները։ Գրքոյկը շատ մաքուր տպված է, Թիֆլիսում պ. Վարդանեանի տպարանում։ Գինը 50 կոպ. է։ Առաւել սիրելի կլինէր գրքոյկը, եթէ մի—երկու աւելորդ ոտանաւորներ դեռեղած չլինէր հեղինակը։

Շնորհակալութեամբ ստացանք Մոսկվայի «Երկրորդ մանկական գիրքը» հրատարակութիւն Մ. Հ. Ռ. Ը։ Գրքոյկը տպված է շատ մաքուր, բովանդակումէ 3 վէպիկ և մի գեղեցիկ նկար։ Գրքոյկի գինը 20 կոպ. է։ Գրքոյկի մէջ պատահումեն դարձեալ քանի մի գռեհկական բառեր։ Ցանկալի կլինէր, որ հրատարակիչները աւելի ուշք դարձնէին լեզուի մաքրութեանը։

Ստացանք «Աղբիւրի» մարտի տետրակը, որի մէջ սիրուն ուղերձ է հրատարակված առ Ամենապատիւ Խմիրեան Հայրիկը։

Ստացանք «Յաւելուած Հայրենիք օրագրի» վերնագրով թերթը և ամենախորին համակրութեամբ կարդացինք։ Մանկավարժանոցը կատարելապէս ձայնակից է Հայրենիքին այս խնդրում։

Աբ և ելքի երբև ընդհանուր ազգի շահերի թարգմանի միակ ընտրելին ի Կաթողիկոսութիւն Ամենապ. Մկրտիչ Արքեպ. Խրիմեան Հայրիկն է։

Մեր երբեմն հրատարակած Հայկական Աշխարհում (1869, №.9, եր. 325) Հայրիկի մասին գրել էինք այս խօսքերը. «Զարմանալի պատիւ է Հայերի համար Խրիմեան Հայրիկի նման մարդ ունենալը»։ Այսօր Մանկավարժանոցն առաւել համակրութեամբ կրկնումէ միևնոյն համոզումն։

Մանկավարժանոցիս խմբագրութիւնը ցաւումէ, որ ներկայ տետրում գետեղված յօդուածների շատութիւնը արգելք եղաւ խմբագրական Ցիշատակարանում հրատարակելու գոնէ մասամբ այն, ինչ որ պատրաստված էր այս տետրում հրատարակելու, մանաւանդ քանի մի աշակերտների մեզ հասած շարադրութիւնները, խմբագրութենից երանց յատկացրած նուէրներով։ Միւս տետրում յօդուածների թիւը կարճելով, խմբագրական Ցիշատակարանին աւելի տեղ տալ կաշխատենք։

հերքումն կարող ենք չտալ այս տեսրում։

Կ. պոլիս, Ս. Է. Դուք շատ կիսոստանաք և սանկ կաւ կկատարէք։ Խորհուրդ կտանք այսուհետև զբնդհակառակն վարվելու, մանաւանդ երբ պարտք դրած էք ձեր վերա։ Նոր հիմնելի Ներսէսեան վարժարանի մասին խոստացած տեղեկութիւնները չստացանք։ Դուք գիտէք թէ մեզ համար որքան տանելի անուն է Ներսէսը։ Արի՞ էլեկ քաղեցնենք կարևոր տեղեկութիւնները։

Ս. Խաչ, Կ. Ա., Փառք Աստուծոն. հաւատալով, յուսալով և սիրելով ամբողջ տարի միայնակ աշխատելուց յետոյ, հասանք այն ժամին, երբ հայազն միեն—երկու ուսուցիչներ, ձեր պէս սրտագին մաղթանք են բացագանչում թէ «Ա՜խ, երբ կլինի, որ հայ ուսուցիչներն ըմբռնեն Մանվարժանոյի բարձր, կրթական նշանակութիւնը»։ Պատասխանումենք. Ա՜խ, երբ կլինի,, որ հայ դպրոցներն բանիմաց ուսուցիչներ ունենան։ Հայկական դպրոցների Աստուած թող օգնէ, որ այս ձեր հիանալի խօսքերն օր առաջ արձագանգ գտնեն հայ ուսուցիչների անարատացած սրտերում։ Իսկ սա այսպէս կլինի միայն այն ժամանակ, երբ ուսուցիչները ոչ թէ թեթեւ թեթեթելով, այլ լրջմտաբար և ուշի ուշով կընթերցասիրեն Մանվարժանոյը։ Ուրախ ենք մեր սիրելի Ս. Խաչեցիների համար, որ ձեր զգայուն և բարեսէր սրտով ուսուցիչներ ունին։

Կարասուբազար, Մ. Դ. Մանվարժանոյն ուղարկվումէ յատկապէս ձեզ և ոչ գրադարանին. նա պիտի կարողանար գտնել Մանվարժանոյի համար էս 3 մանէթ, երբ ուրիշ պարբերականների համար փող ունեցաւ։

Թիֆլիս, Ա., Անկեղծ շնորհակալութիւն ձեր բարեմաղթութիւնների համար։ Այո, Մանվարժանոյի աշխատակիցները խելքին աջ պուօշներից չեն, փիլիսոփաներից չեն, ինչպէս ասումէք, բայց ցաւելով կասեմ,և ոչ ձեր կարծած ժողովրդական ուսուցիչներից են։ Ինչպէս նկատած պիտի լինիք, մինչև այժմ բոլոր ուսուցիչներն աննկարելի սառնասրտութեամբ վարվեցան Մանվարժանոյի հետ։ Այժմ նոր

ահա կարծես սկսել են սթափել անիմաստ քնից... Առանձնապէս մաքրասէր լինելով, Մանավարժանոցը չէ կարող իհարկէ հաւանել հայերէն դասագրքերի չափազանց անկանոն և խառնաբնթոր լեզուն։ Հետաքրքրութեամբ կսպասենք ձեր յօդուածը։ Մանավարժանոցը կենդանի յոյսով հաւատալով մարդավարի ապագային, աշխատումէ, քարոզումէ և փափագումէ, որ թշուառները նախքան խոնաւ սառն դամբան, լոյս օր տեսնեն աշխարհում, ուստի առաւել յուսադրական, քաջալերական բանաստեղծութիւն կցանկար առաջարկել իւր ընթերցողներին։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

1885 թ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ամսագիրը կհրատարակվի գլխաւորապէս մանկավարժական ոգով։ Իւրաքանչիւր երկու—ամիս մի տեսակ երկու թերթից է։ Ցուլիս և օգոստոս ամիսներում չի հրատարակվի։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑԻ տարեկան գինն է 3 մանէթ։ Ստորագրվողները յատկապէս պիտի գնեն այս հասցէով. Ахалцихъ. Редакціи Манкаваржаноцъ.

ԱՐԵՒԵԼՔ

Օրագիր քաղաքական և ազգային։ Տարեկան գինն է 56 ֆրանկ, կէս տարվան 28 ֆրանկ։ Հասցէն. Կ. Պոլիս, Ղալաթիա Նորատունկեան խան։

ԱՂԲԻՒՐ

Պատկերազարդ ամսագիր երեխաների և դաստիարակների համար։ Տարեկան գինն է 3 մանէ։ Հասցէն. Тифлисъ. Редакція „Агнюръ“.

Խմբագիր-հրատարակող ԻՈՐԷՆ Ծ. ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆ։

Дозволено ценз. Тифлисъ, 10 марта 1885 г.

Типографія М. Каламкарова, Алек. ул. д. № 2.